2026, ՄԱՐՏ Բ, ԹԻՎ 6 (698)

Էջմիածին

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ծաղկազարդի տոնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Մարտի 29-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցին տոնախմբեց մեր Տեր Հիսուս Քրիստոսի՝ Երուսաղեմ հաղթական մուտքի հիշատակը՝ Ծաղկազարդի տոնը, որը Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ հռչակվել է Մանուկների օրհնության օր:

Այս առիթով Առավոտյան ժամերգությունից հետո, հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մոմավառության աղոթասրահում տեղի ունեցավ Անդաստանի արարողություն և մանուկների օրհնության կարգ:

Նորին Սրբությունն իր օրհնությունը բաշխեց Մայր Աթոռում համախմբված բազում մանուկների՝ նրանց ընծայելով խաչեր, իսկ հավատավոր ժողովրդին բաշխվեցին Անդաստանի ընթացքում օրհնված ուռենու ճյուղերը:







Բերկրառատ տոնի կապակցությամբ Միածնաէջ Մայր Տաճարում, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցվեց Սուրբ և Անմահ Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռի Քարոզչական կենտրոնի տնօրեն Հոգեշնորհ Տ. Զաքարիա ծայրագույն վարդապետ Բաղումյանը:

Հայր Սուրբը, իր քարոզում անդրադառնալով օրվա խորհրդին, ի մասնավորի նշեց. «Հիսուս Երուսաղեմ մտավ ոչ թե փառաբանվելու, այլ չարչարվելու և խաչվելու մարդկության փրկության համար: Այսօր Տիրոջը փառաբանողները վաղը Պիղատոսից պահանջելու են խաչել Նրան: Այս լուսավոր տոնը ինքնատիպ հավատի փորձություն է, երբ կարևոր են ոչ միայն օրհնաբանելն ու փառաբանելը, այլ նաև անպայմանավոր հավատարմությունն Աստծուն և մեր հայրերի թողած հոգեմտավոր հարուստ ժառանգությանը: Ուստի եկեք մեր սրտի դռները բացենք և թույլ տանք, որ Հիսուս մտնի և թագավորի այնտեղ՝ առաջնորդելով դեպի հաղթանակ և երկնքի արքայություն»:

Սուրբ Պատարագի ավարտին, Ամենայն Հայոց Հայրապետի նախագահությամբ, վերստին կատարվեց մանուկների օրհնության կարգ:



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հնդկաստանում բուժումն ավարտած Արցախյան պատերազմի մասնակից Արտաշես Ամիրյանին

Մարտի 25-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Արցախյան առաջին պատերազմի ընթացքում հաշմանդամություն ձեռք բերած Արտաշես Ամիրյանին, որ Նորին Սրբության հոգածությամբ մեկնել էր Հնդկաստան՝ ստանալու անհրաժեշտ բուժումն ու պրոթեզավորումը: Հանդիպմանն Արտաշես Ամիրյանն իր երախտագիտությունը հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին ցուցաբերած աջակցության համար՝ տեղեկացնելով բուժման արդյունավետ ընթացքի և Հնդկաստանում խնամատար կեցության մասին:

Այնուհետև Նորին Սրբությունն իր օրհնությունը բերեց Արտաշես Ամիրյանին՝ գոհունակությամբ արձանագրելով, որ բուժական այս խնամքով կբարելավվի վերջինիս կենսագործունեությունը: Իր խոսքում Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը շարունակելու է անհրաժեշտ աջակցություն և մշտական հոգածություն ցուցաբերել՝ հասնում հայրենիքի պայքարում իրենց առողջությունը նվիրաբերած հայորդիների՝ զորակցելով նրանց և նրանց ընտանիքներին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռում ընդունեց հայորդյաց տների սաներին

Մարտի 29-ին՝ Ծաղկազարդի տոնի առիթով, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Հայկական բարեգործական ընդհանուր միության հովանու ներքո գործող հայորդյաց տների շուրջ 760 սաների:



Հայորդյաց տների հոգևոր տեսուչ Հոգեշնորհ Տ. Հարություն վարդապետ Կիրակոսյանը սաների անունից ուրախություն հայտնեց Ծաղկազարդի տոնի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին այցելելու և Հայոց Հայրապետի օրհնությունն ստանալու հնարավորության համար:

Իր օրհնությունն ու հայրական սերը փոխանցելով հայորդիներին՝ Նորին Սրբությունը գոհունակությամբ ընդգծեց, որ ի դեմս հայորդյաց տների՝ Հայ Եկեղեցին իր կարևոր նպաստն է բերում մատաղ սերնդի կրթության և դաստիարակության գործին:

Վեհափառ Հայրապետն ուրախությամբ հաստատեց, որ հայորդյաց տներում ոչ միայն բացահայտվում ու զորանում են հայորդիների տաղանդներն ու շնորհները, այլ նաև կերտվում է նրանց նկարագիրը՝ խարսխված հոգևոր և ազգային արժեքների վրա: Այս առնչությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսն արձանագրեց, որ սաներն իրենց ձեռք բերած հմտություններն ու կարողությունները կծառայեցնեն հայրենիքի առաջընթացին:

Հանդիպմանը Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց հայորդյաց տների տնօրեն կազմին, մանկավարժներին և հայորդյաց տներում հոգևոր ծառայություն իրականացնող քահանա հայրերին իրենց նախանձախնդիր, ժրաջան ու նվիրյալ աշխատանքի համար: Վերջում Հայոց Հովվապետը հայորդյաց տան սաներին ընծայեց Ընտանեկան Աստվածաշնչեր և խաչեր:

Հաղորդագրություն

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ մարտ 16, 2026 թվակիր Հայրապետական տնօրինությամբ Վայոց ձորի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Աբրահամ արքեպիսկոպոս Մկրտչյանը ազատ է կացուցվել թեմակալ առաջնորդի պաշտոնից և կոչվել հանգստյան՝ իր գրավոր և բանավոր դիմումների հիման վրա: Հայրապետական տնօրինությամբ Սյունյաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Մակար եպիսկոպոս Հակոբյանը համատեղության կարգով նշանակվել է Վայոց ձորի թեմի առաջնորդական տեղապահ՝ իրականացնելու թեմակալ առաջնորդի պարտականությունները:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցագիր է հղել Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Բ-ի վախճանման առիթով



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանուն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Գերագույն հոգևոր խորհրդի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության և հավատավոր ժողովրդի ցավակցագիր է հղել Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Նորին Սրբություն Իլիա Բ-ի վախճանման առիթով:

«Նորին Սրբություն Իլիա Բ Կաթողիկոս-Պատրիարքի բազմամյա հովվապետական ծառայության ընթացքը վկայություն եղավ հավատքի ամրության ու հոգևոր նվիրյալ առաջնորդության: Նրա հովվապետությունը նշանավորվեց Վրաստանում հոգևոր կյանքի վերազարթոնքով, եկեղեցական կյանքի զորացմամբ և աշխուժացմամբ: Դժվարին ժամանակներում երջանկահիշատակ Պատրիարքը հայրական իմաստությամբ և սիրով առաջնորդեց իր հավատավոր հոտը՝ հաստատուն պահելով Վրաց Սուրբ Եկեղեցու առաքելությունը»,– ասված է Ամենայն Հայոց Կաթողիկոսի ցավակցագրում: Վեհափառ Հայրապետն Ամենակալ Տիրոջ մխիթարությունն է հայցել Վրաց Ուղղափառ Եկեղեցու հոգևորականությանն ու վրաց սգակիր բարեկամ ժողովրդին՝ մաղթելով, որ Նորին Սրբության հիշատակը միշտ վառ մնա հավատավոր իր զավակների սրտերում և ներշնչման աղբյուր դառնա գալիք սերունդների համար:

Լրատվական նյութերը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգի

Հավատացյալներն ինչու պիտի զգուշանան կարգալույծ արված կեղծ «հոգևորականից», և ինչու է նրա արածը սրբապղծություն

Հոգևոր վտանգից խուսափելու համար անհրաժեշտ է, որ մարդիկ իմանան կարգալույծ եղած նախկին հոգևորականի կեղծ քահանայագործման և նրա կեղծ ծիսակատարության մասին ողջ ճշմարտությունը, որպեսզի լինեն պաշտպանված:

1. Ըստ Հայ Եկեղեցու վարդապետության և կանոնների՝ կարգալույծ արվածը բոլորովին զրկվում է քահանայական կարգից, շնորհից, օծումից, ձևից և նշանից, այսինքն՝ նա դասվում է աշխարհականների շարքին:

2. Հայ Առաքելական Եկեղեցու տեսանկյունից՝ կարգալուծության դեպքում տեղի է ունենում ավելին, քան պարզապես իրավական սահմանափակումն է:

3. Կարգալույծի օծումը կամ դրա հետ կապված շնորհը դադարում է գործել, քանի որ քահանայական կարգը, շնորհը, օծումը, նշանը և ձևը փոխկապակցված են: Անհնազանդ հոգևորականը, եկեղեցական իշխանության կողմից զրկվելով կարգից, զրկվում է և դրանցից:

4. Կարգալույծը կտրվում է Խորհուրդների շնորհների աղբյուրից՝ Աստծուց, որը գործում է միայն Եկեղեցու Մարմնի միջոցով:

5. Կարգալույծի կողմից կատարված «խորհուրդի» միջոցով չի փոխանցվում Սուրբ Հոգու շնորհը, քանի որ նա այլևս քահանա չէ, Եկեղեցու նվիրապետությունից դուրս է գործում և հետևաբար՝ Աստծո կամքից դուրս:

6. Կարգալույծի կողմից ոչ մի եկեղեցական խորհուրդ չի իրագործվում, այսինքն՝ նրա կողմից կատարված ցանկացած ծես՝ «մկրտություն», «պատարագ», «պսակ», «ձեռնադրություն», նաև «թաղման» և «բժշկության» կարգերն անվավեր են, հոգևոր տեսանկյունից բովանդակազուրկ և անարգանք են Սուրբ Խորհուրդի հանդեպ:

7. Կարգալույծի ձեռքով կատարված ցանկացած «արարողություն» հոգևոր տեսանկյունից ոչ միայն դատարկ է ու խորհրդազրկված, այլև խիստ վտանգավոր:

8. Կարգալույծի ձեռամբ ոչ մի «խորհուրդ» վավեր չէ թե՛ իրավական, թե՛ հոգևոր և թե՛ միստիկ տեսանկյունից:

9. Եթե կարգալույծ արվելուց հետո քահանան հանդգնի շարունակել ներկայանալ և գործել որպես քահանա, ապա ըստ կանոնի՝ նա ամբողջովին պետք է արտաքսվի Եկեղեցուց, իսկ նրանից մկրտվածներին ու պսակվածներին պարտադիր պետք է նորից մկրտել և նորից պսակել:

10. Մկրտությունը և պսակը զուտ վկայական տալ-չտալու հարց չեն: Կարգալույծի կատարածի մեջ, ծեսին հատուկ արտաքին տեսանելի գործողություններից բացի, որևէ աստվածային ծածուկ՝ անտեսանելի խորհուրդ չի կատարվում: Այսինքն՝ Սուրբ Հոգու ներգործությամբ կատարված մկրտության, պսակի իրական խորհուրդներ չեն, երկնքում ոչինչ չի արձանագրվում, «պատարագի» ընթացքում նշխարն ու գինին չեն վերափոխվում Տեր Հիսուս Քրիստոսի սրբարար ու կենարար Մարմնին ու Արյանը:

11. Կարգալույծ քահանայի պնդումը, թե իր օծումը մնում է և հիմք է հետագա քահանայագործման, կեղծ և անհիմն է: Այո՛, օծումն անկրկնելի է, սակայն կարգալույծի դեպքում այն լուծվում («կապվում») է և դառնում անգործունյա: Օծումը քահանայի սեփականությունը չէ, որ իր կամքով պահի, այլ տվողն է լուծում և դարձյալ վերականգնում, եթե ապաշխարությամբ վերադառնում է իր՝ Մայր Եկեղեցու գիրկը: Քահանայական դրոշմը՝ որպես հնարավորություն, տեխնիկապես մնում է, և դա է պատճառը, որ ապաշխարող քահանային կրկնաձեռնադրություն չի արվում:

12. Քահանայական ձեռնադրության անջնջելիությունը բացառապես Կաթոլիկ Եկեղեցու ուսմունք է, որը հաստատվել է Տրիդենտյան ժողովում (1545–1563 թթ.) և գործադրումն է այդ ժողովի որոշումների: Այդ ժողովի որոշումները տարածվում են միմիայն ժողովը գումարած Եկեղեցու և այդ ժողովի որոշումներն ընդունողների վրա:

13. Նշյալ կաթոլիկ ժողովի տրամաբանությամբ ստացվում է, որ եպիսկոպոսը, ձեռնադրություն կատարելով, փոխանցում է ոչ թե եկեղեցական շնորհը, այլ իր անձնականը, և դրա համար էլ այնքան կարևոր չէ, թե քահանան իր Եկեղեցու հե՞տ է, թե՞ հեռացել է նրանից: Ըստ այդմ՝ քահանան կարող է բաժանվել եկեղեցական իշխանությունից, արգելված լինել, կարող է բոլորովին հեռանալ քրիստոնեությունից, դառնալ, օրինակ, օկկուլտիստ կամ բացահայտ անաստված, բայց և այնպես մնալ քահանա՝ պահպանելով առաքելական ձեռնադրությունը:

14. Ըստ Ուղղափառ Եկեղեցու վարդապետության՝ կրկնամկրտություն կամ կրկնաձեռնադրություն չի կատարվում, քանի որ հակառակ դեպքում աստվածաբանական ընկալումով ընդունելի կլիներ, որ անձի անարժանության, պղծության պարագայում եղծվում է նաև նրան տրված աստվածային շնորհը, և այն պետք է կրկնել՝ շնորհը շտկելու կամ սրբելու համար: Այդ պատճառով էլ ոչ թե քահանայության կամ մկրտության անջնջելիությունն է հաստատագրվում, այլ շեշտվում է աստվածային շնորհի անեղծանելի բնույթը:

15. Կարգալուծությունը միայն թղթի վրա գիր չէ, որը կարգալույծը կարող է չընդունել կամ անտեսել, այլ եկեղեցական իշխանության վճիռ, որով լուծվում են քահանայի տվչական շնորհի գործունեությունը և ուժը՝ կտրելով այն Եկեղեցու կենարար միասնությունից:

16. Քահանայագործելու իրավունքը բխում է ձեռնադրության ժամանակ Աստծուց ստացած շնորհներից: Սա գրասենյակային թույլտվության հարց չէ, աշխատանքային հարաբերություն չէ և հետևաբար՝ ենթակա չէ Եկեղեցուց դուրս որևէ աշխարհիկ կարգավորման:

17. Կարգալուծությամբ վերցվում է այդ իրավունքը, քանի որ իրավունք ծնող աղբյուրը՝ ձեռնադրությամբ ստացված շնորհը, տվողի կողմից հետ է վերցվում:

18. «Լուծում» բառը նկարագրում է կարգալույծ քահանայի շնորհի գործադրման լիակատար դադարեցում, որը ոչ միայն կանոնական պատիժ է, այլև հոգևոր հետևանք:

19. Կարգալույծի կողմից մատուցված «պատարագը», կատարված «մկրտությունը», «պսակը» ոչ թե շնորհ են, իսկ «թաղման կարգը»՝ ոչ թե մխիթարություն և առ Աստված ողորմության աղերս, այլ մարդկանց հանդեպ խաբեություն և հայհոյություն Սուրբ Հոգու դեմ:

20. Խաբեություն են նաև կարգալույծի կողմից խոստովանություն ընդունելը, մեղքերի թողություն տալն ու ապաշխարության կարգ նշանակելը: Դրանք նույնպես անվավեր են:

21. Կարգալույծն իրավունք չունի գտնվելու Եկեղեցու դասում, ավանդատներում, էլ չասած՝ խորան բարձրանալու և եկեղեցական պարագաներին՝ սկիհին, մասնատուփին, մեռոնամանին, Ավետարանին ձեռքով դիպչելու: Նրա՝ որպես հոգևոր կոչում չունեցող անձի կողմից սրբազան վայրի՝ եկեղեցու, եկեղեցական սպասքի ապօրինի օգտագործումը, ծեսի պատրանքով աղտոտելը կանոնական հանցանք է և *սրբապղծություն*:

22. Կարգալույծն իրավունք չունի Ս. Հաղորդություն բաշխելու: Դա նույնպես *սրբապղծություն* է:

23. Կարգալույծն իրավունք չունի հոգևորականի զգեստ հագնելու, լանջախաչ կրելու և այլն: Դրանով նա միտումնավոր մոլորեցնում է մարդկանց:

24. Կարգալույծի քահանայագործելու նմանակումը (իմիտացիա) պարզապես վարչական սխալ կամ կարգապահական խախտում չէ, այլ հոգևոր կեղծիք, որը գայթակուղ է մարդկանց և նենգաբար հարվածում Եկեղեցու նվիրապետության հիմքերին: Սրանք ծանրագույն մեղքեր են:

25. Կարգալույծները խաբում են պարզամիտ հավատացյալներին՝ նրանց մատուցելով «դատարկ բաժակ»: Նրանք չեն փոխանցում Աստծո օրհնությունը, այլ մոլորվածներին իրենց ըմբոստությանն են մասնակից դարձնում:

26. Հիսուս Քրիստոս Սուրբ Հոգուն անվանեց «Ճշմարտության Հոգի» (Հովհ. 14:17): Իսկ կարգալույծը, զրկված լինելով քահանայական շնորհից, երբ ձևացնում է, թե «պատարագ» է մատուցում կամ «մկրտություն» անում, նա Աստծո անունով կեղծիք է մատուցում: Դա ոչ միայն կանոնական ապօրինություն է, այլև ծանրագույն մեղք՝ *սրբապղծություն*:

27. Ճշմարտության Հոգու Անունը ստի և խաբեության մեջ օգտագործելը նշանակում է ուղղակիորեն հակառակել այդ Հոգուն: Սա *սրբապղծություն* է, որովհետև կարգալույծը խաբեբաբար Սուրբ Հոգու շնորհները սեփական անձին վերագրելու պատրանք է ստեղծում՝ մարդկանց մոլորեցնելու համար:

28. Եկեղեցական խորհուրդները (Մկրտություն, Պսակ, Ս. Հաղորդություն) կատարվում են Սուրբ Հոգու էջքով և ներգործությամբ: Բայց այդ շնորհը տրվում է Եկեղեցու միջոցով՝ առաքելական հաջորդականությամբ, որից զրկվում են կարգալույծները:

29. Երբ մարդը կտրվում է առաքելական հաջորդականությունից (կարգալույծ է լինում), նրանից վերցվում է խորհուրդներ կատարելու իշխանությունը:

30. Շարունակելով խորհուրդներ և ծեսեր կատարել՝ նա փորձում է «գողանալ» Աստծո շնորհը (ինչը, իհարկե, անհնար է) կամ նմանակել ու կապկել: Սա վկայում է այն մասին, որ կարգալույծը գիտակցաբար է ընտրում չարիքը:

31. Աստվածաշունչը վկայում է, թե ինչպես է չար ոգին Աստծո շնորհը չունեցողի, բայց դիվահալածության փորձ անողի վրա հոխորտում. «Հիսուսին գիտեմ և Պողոսին ճանաչում եմ. բայց դուք ո՞վ եք» (Գործք 19:15):

32. Անվավեր «պատարագ» մատուցելով՝ կարգալույծները մարդկանց փրկության փոխարեն դատապարտություն են հրամցնում:

33. Կարգալույծի՝ որպես կեղծ «հոգևորականի» հանդես գալը ոչ միայն հոգևոր ապստամբություն է Քրիստոսի խորհրդական Մարմնի՝ Ընդհանրական Եկեղեցու դեմ, այլև բացահայտ *սրբապղծություն* և Քրիստոսի հոտի՝ հավատավոր ժողովրդի խաբեություն: Նա վերածվում է «ոչխարի զգեստով հափշտակող գայլի» (Մատթ 7:15), որ հոտին առաջնորդում է դեպի հոգևոր կործանում:

34. Կարգալույծը, խաբելով հավատացյալին, նրան զրկում է Տիրոջ հետ իրական ս. հաղորդությունից: Մարդը կարծում է, թե հաղորդ է դառնում Քրիստոսին, սակայն Նրա Մարմնի և Արյան փոխարեն պարզապես հաց ու գինի է ստանում՝ մատուցված մի ապստամբ սրբապիղծի կողմից: Սա հոգևոր թույնով շարունակական սպանություն է, իսկ Սուրբ Հոգին է Կյանք տվողը: Կյանքի փոխարեն կեղծիք ու խաբեություն մատուցելը հակառակություն է Սուրբ Հոգուն:

35. Սուրբ Հոգու դեմ հայհոյությունն աններելի է համարվում այն պատճառով, որ մարդը գիտակցաբար մերժում է ճշմարտությունը և փակում ապաշխարության դուռը: Եթե անձինք գիտեն, որ իրենք կարգալույծ են, բայց շարունակում են ձևացնել, թե «հոգևորական» են, նրանք դառնում են հոգևորականի դերասան և գտնվում են գիտակցված չարիքի կերպարում: Կարգալույծն այլևս չի լսում Սուրբ Հոգու ձայնը, որը կանչում է զղջման, այլ լսում է իր հպարտությամբ սնվող չարի կողմից խրախուսվող «ես»-ի հրամանները միայն: Սա հենց այն աններելի վիճակն է, որի մասին զգուշացրել է Տերը:

36. Հովհաննես Արծիշեցին գրում է. «Քահանայական շնորհը մշտամնա է, եթե հոգևորականն իր կարգի մեջ է: Իսկ եթե կարգի մեջ չէ, չի կարող պատարագ մատուցել, չի կարող օգտվել քահանայագործության, խորհուրդների կատարման իրավունքներից և ոչ էլ շնորհաբաշխության իրավունք ունի: Կարգից լուծարումը վերաբերում է նաև օծումից լուծարելուն»:

37. Բաբկեն կաթողիկոս Կիվլեսերյանն իր «Քրիստոնեականը» աշխատության մեջ նշում է. «Խորհուրդները սկզբունքորեն անջնջելի են: Բայց նրանք, ովքեր ուրանում են իրենց հավատքը՝ հավատք բառի քրիստոնեական և աստվածաբանական իմաստով, և հարում են ոչ քրիստոնեական կյանքի, ովքեր անաստված և հեթանոս են դառնում՝ ուրանալով իրենց քրիստոնեությունը, այնպիսիների վրայից ինքնին ջնջվում են կատարված խորհուրդները:


Դարձյալ՝ նրանք, ովքեր ձեռնադրությամբ և օծումով կարգ են ստացել և այլևայլ պատճառներով կարգազրկվել կամ ինքնակամ կարգաթող եղել, այնպիսիների վրայից խորհուրդը ջնջվում է»:

38. «Կանոնագիրք Հայոց»-ում կանոնները հստակորեն մատնանշում են, որ կարգալուծությունը վերաբերում է քահանայական կարգին՝ իր բոլոր բաղադրիչներով, այդ թվում՝ օծումին:

Այսպիսով՝ անհրաժեշտ է հավատացյալ ժողովրդին հնարավորինս լայնորեն իրազեկել, լուսաբանել, որ զգուշանան և հեռու մնան կարգալույծների կեղծ ծիսակատարություններից: Դրանք ոչ միայն կանոնական ապօրինություն են, այլև սրբազան խորհուրդների անարգում, ծանրագույն մեղքեր՝ գայթակղություն և սրբապղծություն: Հավատացյալների համար այդ ամենը պարունակում է հոգևոր մեծ վտանգ:

Սամվել դպիր ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ասված ունի Բ ծրագիր



Անպտուղ թզենու անիծումը

Առաջնեկության էստաֆետը. Իսրայելից մինչև Հայոց աշխարհ

Կյանքն իր էությամբ ընտրությունների մի անվերջանալի շղթա է, որտեղ յուրաքանչյուր քայլ, որոշում կամ շրջադարձ մեզ դնում է Ա և Բ տարբերակների առջև: Մարդկային բնազդը մեզ սովորեցնում է միշտ ունենալ պահեստային ելք: Մենք կառուցում ենք մեր ապագան Ա նախագծի վրա՝ լի հույսով ու վստահությամբ, սակայն ենթագիտակցորեն միշտ կրում ենք Բ ծրագրի անհրաժեշտության զգացումը: Այդ տարբերակը մեր ապահովագրությունն է, մեր այն պահի հենարանը, երբ իրականությունը բախվում է մեր սպասելիքներին, և երբ առաջին ճանապարհը դառնում է անանցանելի:

Բայց արդյո՞ք Բ նախագիծը միայն մարդկային տկարության կամ անվստահության հետևանք է: Եթե ուշադիր դիտենք տիեզերքի կառուցվածքը և պատմության ընթացքը, կտեսնենք մի զարմանալի օրինաչափություն. Արարիչը՝ Բացարձակ Իմաստությունը, ինքնին Իր արարչագործության մեջ ներդրել է փոխարինման և նորոգման սուրբ տրամաբանությունը: Աստվածային Բ ծրագիրը ոչ թե Արարչի ձախողման նշանն է, այլ Նրա անսահման սիրո և մարդու ազատ կամքի նկատմամբ ունեցած հարգանքի մեծագույն դրսևորումը:

Մարդն ունի ազատություն՝ ընտրելու Ա ծրագիրը՝ Աստծո հետ քայլելու ուղին, բայց նա նաև ունի սայթաքելու իրավունք, և հենց այստեղ է հայտնվում աստվածային նախախնամության հանճարը: Երբ մարդկային սխալը կամ ըմբոստությունը փակում է առաջին դուռը, Աստված չի կանգնեցնում պատմությունը: Նա բացում է երկրորդը, որը հաճախ լինում է ավելի լուսավոր, ավելի հաստատուն և ավելի փառավոր: Սա ծրագրերի ծրագիրն է, որտեղ ամեն մի կորուստ ունի իր վերականգնումը, ամեն մի «ուևայնություն» (Աբել) ունի իր «հիմքը» (Սեթ), և ամեն մի սայթաքած առաջնեկ ունի իր արժանավոր հաջորդը:

Յուրաքանչյուրս պետք է իմանանք կամ խորհենք այն մասին, թե ինչպես է աստվածաշնչյան պատմության միջոցով բացահայտվում այս մտավոր գաղտնիքը՝ սկսած արարչագործությունից մինչև հայ ազգի ընտրությունն ու Քրիստոսի Երկրորդ Գալուստը: Այս իմաստով՝ կարելի է ասել, որ Բ ծրագիրը ոչ թե փոխարինում է Ա-ին, այլ լրացնում ու կատարելագործում է այն՝ դառնալով մարդկության փրկության միակ և անխաթար երաշխիքը: Սա մի համեստ մտորում է այն մասին, թե ինչպես է Աստված մեր ձախողումներից հյուսում հաղթանակի պսակը:

Ընտրյալ լինելը արտոնություն չէ, այլ առաքելություն

Պատմության ընթացքում մարդկությունը հակված է եղել կարծելու, թե Աստծո ընտրությունը մի անփոփոխ կնիք է, որը հավերժական բարօրություն է երաշխավորում՝ անկախ մարդու հետագա քայլերից: Սակայն Սուրբ Գրքի և պատմության փորձը հուշում է հակառակի մասին: Աստվածային Ա ծրագիրը երբեք մեխանիկական, ինքնաբերական չէ և չի կարող լինել, քանի որ այն կենդանի երկխոսություն է Արարչի և արարածի միջև: Բ ծրագիրը՝ իր իմաստային և բովանդակային էությամբ, Աստծո պարտությունը չէ, այլ Նրա անսահման սիրո և արդարության դրսևորումը. երբ մարդը սեփական կամքով հրաժարվում է իր կոչումից, իրեն վստահված առաքելությունից, անպայմանորեն մեկ ուրիշն է ստանձնում այդ լուծը՝ նաև հանուն հրաժարվողի փրկության: Աստվածաշնչում բազում են այնպիսի օրինակներ, որոնք ընթերցողին կհուշեն անձնային Ա և Բ ծրագրեր լինելու մասին:

Աստվածաշնչյան պատմության մեջ 12 թիվը խորհրդանշում է լիություն և կառավարում: Հակոբ նահապետի 12 որդիները դարձան Իսրայելի 12 ցեղերի հիմնասյուները, սակայն ուշագրավ է, որ Աստվածաշնչում կան նաև այլ կերպարներ (օրինակ՝ Իսմայելը), որոնք նույնպես ունեցել են 12 որդի կամ իշխանավոր: Սա ցույց է տալիս, որ քանակական կամ արյունակցական գործոնը դեռևս բավարար չէ Աստծո հավերժական ծրագրում մնալու համար: Սա խոսում է այն մասին, որ Հակոբի 12 որդիներին իրենց առաքելության մեջ կարող էին փոխարինել Իսմայելի որդիները:

Աստված ընտրում է մեկին, բայց այդ ընտրությունը վավերական է մնում միայն այնքան ժամանակ, քանի դեռ ընտրյալը քայլում է Աստծո կամքի համաձայն, ուստի ազատ կամքն այս պարագայում ընտրության գրավականն է: Եթե մարդը չի արդարացնում իրեն, նա կարող է զրկվել այդ կարգավիճակից:

Օրինակ՝ Ռուբենը՝ Հակոբի անդրանիկ որդին, պետք է ստանար առաջնեկության իրավունքը, բայց իր մեղքի պատճառով կորցրեց այն: Աստվածաշնչյան պատմության մեջ Ռուբենը Ա ծրագրի ձախողման ամենացավոտ օրինակներից մեկն է: Լինելով Հակոբի և Լիայի անդրանիկ որդին՝ նա օրենքով և բնությամբ կոչված էր՝ կրելու տոհմի ողջ փառքը, հոգևոր առաջնորդությունն ու նյութական ժառանգությունը: Սակայն նրա անկայուն բնավորությունը հանգեցրեց նրան, որ աստվածային Բ ծրագիրը ոչ թե պարզապես փոխարինեց նրան մեկ ուրիշով, այլ նրա արտոնությունները բաժանեց երեք արժանավոր եղբայրների միջև.

Ժառանգության իրավունքը փոխանցվեց Հովսեփին: Անդրանիկի առաջին իրավունքը հոր ունեցվածքից երկու բաժին ստանալն էր: Ռուբենի մեղքի պատճառով այս պատիվը տրվեց Հովսեփին, որին Աստված նախապատրաստել էր Եգիպտոսի փորձությունների միջոցով: Հովսեփն ստացավ կրկնակի ժառանգություն իր երկու որդիների՝ Եփրեմի և Մանասեի միջոցով, որոնք դարձան Իսրայելի առանձին ցեղեր. «Իսրայելի անդրանիկ որդի Ռուբենի որդիները (որովհետև նա էր անդրանիկը, բայց քանի որ իր հոր անկողինը պղծեց, նրա անդրանիկությունը տրվեց Իսրայելի որդի Հովսեփի որդիներին)» (Ա Մնաց. Ե 1):

Թագավորական և իշխանական իրավունքը փոխանցվեց Հուդային: Թեև ժառանգությունը փոխանցվեց Հովսեփին, տոհմի առաջնորդի և թագավորական իշխանությունը տրվեց Հուդային: Աստված Հուդայի մեջ տեսավ այն պատասխանատվությունը, որը չկար Ռուբենի մեջ: Հենց Հուդայի սերնդից պիտի ծնվեին Դավիթ թագավորը և Փրկիչը. «Հուդա՛.... քո հոր որդիները պիտի երկրպագեն քեզ.... իշխանության գավազանը չպիտի պակասի Հուդայից, և ոչ էլ օրենսդիրը՝ նրա սերնդից» (Ծննդ. ԽԹ 8—10):

Քահանայական և սպասավորության իրավունքը փոխանցվեց Ղևիին: Անդրանիկը տոհմի քահանան էր, որը զոհեր էր մատուցում Աստծուն: Ռուբենի սայթաքումից հետո այս սրբազան պաշտոնը հետագայում վստահվեց Ղևիի ցեղին, որը և դարձավ Աստծո տան սպասավորը. «Ահա ես Իսրայելի որդիների միջից վերցրի ղևտացիներին՝ Իսրայելի որդիների բոլոր անդրանիկների փոխարեն.... և ղևտացիները Իմը պիտի լինեն» (Թվեր Գ 12): Ուստի՝ Աստված երբեք չի կաշկանդում մարդու ազատությունը: Եթե Ա նախագծի մասնակիցը դառնում է անպտուղ, Աստծո ծրագիրը չի դադարում. Աստված գործի է դնում Բ նախագիծը՝ գտնելով նոր սիրտ և նոր հոգի, որը պատրաստ է սպասավորելու Ճշմարտությանը:

Իսրայելից դեպի Հայաստան. Բ ծրագրի իրականացումը

Հրեա ժողովուրդը դարեր շարունակ եղել է Աստծո Ա ծրագիրը՝ մեսիական սպասման կրողը, սակայն երբ Քրիստոս՝ Աստվածորդին, եկավ Իր սեփական ժողովրդի մոտ, և այդ ժողովուրդը չընդունեց Նրան, տեղի ունեցավ մեծագույն շրջադարձը: Ընտրյալ լինելու հոգևոր էստաֆետը փոխանցվեց նրանց, ովքեր հավատացին և ընդունեցին: Հայ ժողովուրդը՝ որպես առաջին քրիստոնյա ազգ, դարձավ այդ աստվածային Բ ծրագրի վառ արտահայտությունը: Երբ նախկին «ընտրյալները» սայթաքեցին, Աստված բացեց դռները հեթանոսների համար, և հայերը, ընդունելով Լույսը, ստանձնեցին այն պատասխանատվությունը, որը ժամանակին պատկանում էր Իսրայելին:

Աստվածաշունչը լի է օրինակներով, որտեղ մարդու անհավատարմությունը կամ հպարտությունն ստիպում է Աստծուն՝ «փոխել» Իր ծրագիրը կատարողին, բայց ոչ երբեք Իր վերջնական նպատակը: Ահա այդպիսի օրինակներից մի քանիսը համառոտ կներկայացնենք ստորև:

Սավուղ և Դավիթ. թագավորական իշխանության փոխանցումը: Սավուղը Աստծո Ա ծրագիրն էր Իսրայելի թագավորության համար: Նա ընտրվեց, օծվեց և ստացավ ամբողջական զորություն: Սակայն երբ Սավուղը սկսեց ապավինել իր սեփական կամքին և անտեսեց Աստծո պատվիրանները, Աստված «զղջաց», որ նրան թագավոր է դարձրել: Բ ծրագիրը՝ Դավիթը՝ պատանի հովիվը, որը ոչ թե մարմնական ուժով կամ ծագումով էր գերազանցում Սավուղին, այլ սրտի խոնարհությամբ, դարձավ նոր ընտրյալը: Այս դեպքում Բ ծրագիրը դարձավ ավելի փառավոր, քան սկզբնականը:

Եսավ և Հակոբ. անդրանիկության իրավունքը: Եսավը՝ որպես անդրանիկ որդի, բնական օրենքով Աստծո օրհնության առաջին ժառանգորդն էր (Ա ծրագիր): Բայց մեկ ոսպապուրի դիմաց նա վաճառեց իր ընտրյալ լինելը: Բ ծրագիրը՝ Հակոբը, որ երկրորդն էր, ստացավ անդրանիկին տրվելիք օրհնությունը: Սա ապացույց է, որ Աստված նայում է ոչ թե ժամանակագրական հերթականությանը, այլ հոգևոր արժեքին:

Նմանօրինակ առաջնեկություն կամ անդրանիկություն էր շնորհված Իսրայելին՝ հրեա ժողովրդին, որը հրեա ազգի սայթաքումից հետո փոխանցվեց հայ ազգին: Այս գաղափարը ամենից հստակ երևում է Քրիստոսի «Անարժեք մշակների մասին» կամ «Թագավորական հարսանիք»-ի առակներում: Երբ հրավիրվածները չեկան խնջույքին, Տերը հրամայեց փողոցներից հավաքել բոլորին:

Հրեա ժողովուրդը կոչված էր՝ լինելու «քահանայական թագավորություն» և Լույս ամբողջ աշխարհի համար: Երբ Քրիստոս՝ մարմնացյալ Աստված, եկավ, հրեա ազգը՝ որպես պաշտոնական Ա ծրագիր, պետք է առաջինն ընդուներ Նրան: Հրեաների մերժումը Գողգոթայում ոչ թե կասեցրեց Աստծո ծրագիրը, այլ այն ուղղեց դեպի մյուս ազգերը:

Երբ Մերձավոր Արևելքում և հրեական միջավայրում քրիստոնեությունը դեռ հալածվում էր, հայ ժողովուրդը՝ որպես հավաքական ամբողջություն, 301 թվականին քրիստոնեությանն ասաց՝ Այո՛: Հայերն ընդունեցին այն հոգևոր ժառանգությունը, որից հրաժարվեց Իսրայելը: Մենք դարձանք «Նոր Իսրայել»՝ կրելով Աստծո ներկայությունը՝ ազգային-հավաքական մակարդակով: Սա էր Աստծո Բ ծրագիրը. եթե առաջին ընտրյալը մերժում է Փրկչին, ապա լեռնաշխարհի մի ժողովուրդ պետք է դառնա այդ Փրկության առաջամարտիկը: Այս գեղեցիկ նկարագրության մեջ, սակայն, պետք է իմանալ, որ Բ-ն նույնպես կարող է կորցնել իր կարգավիճակը: Աստվածաշնչյան ամենացավոտ ու միաժամանակ արդարացի ճշմարտությունն այն է, որ ընտրյալ լինելը անփոփոխ չէ: Պողոս առաքյալը հռոմեացիներին ուղղված թղթում հստակ զգուշացնում է հեթանոսներին (այդ թվում՝ մեզ)՝ օգտագործելով ձիթենու օրինակը. «Եթե Աստված բնական ճյուղերին (հրեաներին) չխնայեց, զգույշ եղիր, գուցե քեզ էլ չխնայի» (Հռոմ.ԺԱ 21):

Հայ ազգն էլ այսօր ունի մարտահրավեր: Եթե մենք՝ որպես Բ ծրագիր, որ դարձավ Ա ծրագիր, սկսենք ապրել՝ առանց Աստծո, եթե մեր քրիստոնեությունը դառնա միայն թանգարանային նմուշ կամ լոկ պատմություն, ապա մենք նույնպես կանգնած ենք սայթաքելու վտանգի առաջ: Աստված սահմանափակված չէ Հայաստանով կամ որևէ այլ ազգով: Եթե մենք դադարենք լինել Լույսի կրողը, Նա ունի և՛ Գ ծրագիր, և՛ Դ ծրագիր՝ այնքան, որքան հարկավոր է Լույսի կրողին գտնելու համար, և, այո՛, Նա կարող է քարերից որդիներ հանել Աբրահամի համար. «Եվ մի՛ կարծեք, թե ձեր մտքում կասեք՝ «Մենք Աբրահամի որդիներն ենք», որովհետև ասում եմ ձեզ, որ Աստված կարող է այս քարերից էլ Աբրահամի համար որդիներ հանել» (Մատթ. Գ 9):

Ընտրյալ մնալու կերպը

Տասը կույսերի առակը: Աստվածաշնչյան ամենաազդեցիկ պատկերներից մեկը տասը կույսերի առակն է: Այն Ա և Բ նախագծերի բախման կատարյալ օրինակ է անձնական և ազգային մակարդակում: Բոլոր տասը կույսերն էլ հրավիրված էին, բոլորն էլ ունեին լապտերներ, բայց տարբերությունը «յուղի» մեջ էր: Ոմանք պատրաստված էին, իսկ ոմանք հույս ունեին կորզել նրանցից, ովքեր արդեն իսկ պատրաստվել էին. «Իմաստուններն իրենց լապտերների հետ ամաններով յուղ վերցրին» (Մատթ. ԻԵ 4): Հայ ազգը՝ որպես քրիստոնյա աշխարհի «առաջնեկ», ստացել է լապտերը (Եկեղեցին, ծեսը, մշակույթը), սակայն «յուղը» մեր ապրված հավատն է: Եթե մենք հպարտանում ենք միայն լապտերով (պատմությամբ), բայց չունենք յուղ (ներկա հոգևոր կյանք), մենք վտանգում ենք մեր Բ ծրագրի կարգավիճակը: Երբ Փեսան՝ Քրիստոս, գա, լոկ «քրիստոնյա ազգ» կոչվելը չի բացելու դռներ, եթե լապտերը հանգած լինի: Ուստի՝ մշտապես պատրաստված լինելն ընտրյալ մնալու գրավականն է:

Վարդանանց ուխտը: Վարդան Մամիկոնյանի ժամանակ հայությունը կանգնած էր ընտրության առաջ: Պարսկաստանը առաջարկում էր Ա ծրագիր՝ լինել հզոր կայսրության մաս՝ ուրանալով Քրիստոսին: Հայերն ընտրեցին Բ ծրագիր՝ մահը՝ հանուն հավատի, որն իրականում Աստծո աչքում ճշմարիտ Ա ծրագիրն էր: Այդ ժամանակ մեր «յուղը» առատ էր, և հենց դա պահեց մեր ազգային ինքնությունը:

Անպտուղ թզենու նախազգուշացումը: Քրիստոսի անեծքն անպտուղ թզենուն ամենախիստ դասն է այն ազգերի համար, որոնք ունեն արտաքին փառք, բայց ներքին դատարկություն: Թզենին հեռվից կանաչ էր ու գեղեցիկ: Նա կարծես Ա ծրագրի խորհրդանիշ լիներ՝ լի կյանքով, բայց Տերը նրա վրա պտուղ չգտավ ու անիծեց նրան. «Թող այլևս ոչ ոք քեզնից պտուղ չուտի հավիտյան» (Մարկ. ԺԱ 14): Մենք ունենք հազարավոր եկեղեցիներ, հարուստ մատենագրություն, բայց եթե մեր հասարակության մեջ չկան սեր, արդարություն և սրբություն, մենք նմանվում ենք այդ թզենուն: Աստված կարող է չորացնել մի ազգի հոգևոր աղբյուրները, եթե դրանք այլևս պտուղ չեն տալիս Տիրոջ համար: Այլ կերպ ասած՝ պետք է զգուշանալ միայն տերևներով գեղեցկանալուց, քանի որ ծառի կարևոր առաքելությունը պտղաբերությունն է:

Գ ծրագիրը. ովքե՞ր են սպասում հերթում

Եթե հին քրիստոնյա ազգերը (ինչպես՝ հայերը, եվրոպացիները) հրաժարվում են իրենց պտուղներից, Աստված բարձրացնում է նորերին: ➥ *էջ 8*

Քրիստոնեությունը և հին ու նոր քաղքենիությունը

«Մտեք նեղ դռնով. ինչքա՜ն լայն է դուռը, և ընդարձակ՝ ճանապարհը, որ դեպի կորուստ է տանում, և բազմաթիվ են նրանք, որ մտնում են դրանով»

(Մատթ. 7.13):

Թեև «քաղքենի» բառը համեմատաբար վերջերս է սկսել շրջանառվել հայոց լեզվում՝ փոխառված ռուսերեն «мещанин» բառից, որն իր հերթին լեհերեն համանուն բառն է՝ քաղաքացի նշանակությամբ, բայց երևույթն աշխարհի պես հին է և բնավ չի սահմանափակվում քաղաքային բնակչությամբ: Ըստ բացատրական բառարանների՝ այն նշանակում է՝ 1. Ցարական Ռուսաստանում մանր առևտրականների, արհեստավորների, ցածր պաշտոնյաների քաղաքային դասին պատկանող անձ: 2. Նեղ՝ սահմանափակ հայացքների տեր մարդ, որ հետաքրքրվում է միայն իր մանր անհատական շահերով: 3. Հանգիստ՝ բարեկեցիկ կյանքի սովոր քաղաքացի:

ՀՍ հանրագիտարանում Ա. Ադիբեկյանի հեղինակած բովանդակալից, բայց կարճամփոփ բառահոդվածում կարդում ենք. «Հասարակության ստորին և վերին խավերի միջև քաղքենիների գրաված միջանկյալ դիրքը պայմանավորել է քաղքենիության հիմնական սոցիալական գծերի հակասականությունը. մի կողմից՝ թաքնված ճգնակեցություն և խնայողություն, ձևական ավանդապահություն, իր «փոքրիկ աշխարհի» հակադրումը ստորին խավերին (որոնց ատում է և, միաժամանակ, ձգտում նրանց, քանի որ նրանց շրջանում իրեն բարձրության վրա է զգում) և վերին խավերին (որոնց երազում է հասնել և ատում է, քանի որ իր համար անհասանելի են), մյուս կողմից՝ հարստությամբ փայլելու ձգտում (ինչ-որ մեկից «առաջ անցնելու տենչ»), այն ամենին հետևելը, ինչը համարվում է «նորաձև», իրեն անմիջականորեն չառնչվող «բարձրագույն» թեմաների շուրջ շաղակրատելը: Քաղքենիությունը դրսևորվում է արվեստում (ծայրահեղ սենտիմենտալություն, մելոդրամատիկություն, երջանիկ վախճանով սյուժեներ), բարոյականության մեջ (կեղծ բարեպաշտություն), կենցաղում (ուշադրությունը ցուցադրելու նպատակով ձեռք բերված «հավերժական» իրերով իրեն շրջապատելը), մտածելակերպում (երևույթներն ընկալելու և գնահատելու անքննադատականություն), արժեքային կողմնորոշումներում և իդեալներում («մարդ դառնալ», «ապրել, ինչպես բոլորը» ևն): Քաղքենիությանը բնորոշ է երկչոտ անսկզբունքայնությունը հասարակական-քաղաքական կյանքում....»:

Չինացի մեծահռչակ իմաստուն Կոնֆուցիուսը որպես «քաղքենի» բառի նույնիմաստ հոմանիշ՝ օգտագործում է «ցածրոգի», «փոքր»՝ «գաճաճ» բառերը՝ ի հակադրություն «վեհանձն»՝ «ազնիվ» եզրույթների:

Ա. Իսահակյանը նյութապաշտության տարածմամբ մտահոգ և մարդկանց հոգեկան անձնությունների մատնվելու կանխազգացմամբ՝ հինկտակարանյան Ամոս մարգարեի նման ահազանգում էր «հոգու սովի» մասին. «Ես ձեզ ասում եմ՝ կգա Ոգու սով, // Եվ դուք կքաղցեք ճոխ սեղանի մոտ....»:

Ցավալի է տեսնել քաղքենի հոգեբանության և աշխարհայացքի դրսևորումը յուրաքանչյուր մարդու վարքագծում, բայց առավել ցավալի է դրա օրըստօրե արմատավորումը ողջ հասարակության մեջ՝ որպես ապրելակերպ, որպես կյանքի իմաստ, մանավանդ ներկայումս՝ Արևմուտքի սպառողական հասարակության գաղափարախոսության և ապրելակերպի ուժգնացած ազդեցությամբ:

Դիպուկ է ռուս անվանի փիլիսոփա Նիկոլայ Բերդյաևի՝ այս երևույթի բնութագիրը. «Մարդը, որը մերժում է գերբնական արժեքները, որն այլևս չի կամենում խոնարհվել սուրբ տաճարների, հավերժական գրքերի, մեծ անունների, չքնաղ բաների առաջ, որը պատկառանք չի տածում գեղեցկության և վեհանձնության, իմաստության, կենդանի պատմության մեջ ի հայտ եկող հավերժության առաջ, մարդը, որն աստվածացնում է իրեն, մարդկայինն ընդունում է որպես իր ամենաանվիրական սրբություն, չգոյություն է, դատարկություն և քաղքենիություն»:

Քաղքենիություն բազմաշերտ երևույթի ամենից մերժելին, հոգեկործանը և ամեն ինչի նախասկիզբը, այնուամենայնիվ, ընչապաշտությունն է՝ մինչև իսկ տները փոքրիկ թանգարանների վերածելը, հարստանալու անհագ ծարավն ու այդ «պատրանքային երկրային դրախտը» վայելելու կիրքը: Հակառակ դրա՝ Աստվածաշունչը բազմիցս է մեզ հիշեցնում, որ ինչքն էլ, հարստությունն էլ, որքան էլ այսօր սեփականության վկայականները փաստեն մեր իրավունքները, ժամանակավորապես՝ մեզ պարտքով տրված բաներ են: Ավելին՝ կյանքն էլ է անցավոր՝ մարդուն ժամանակավորապես՝ պարտքով տրված, որ ամեն վայրկյան կարող է հետ պահանջվել, ինչպես այդ մասին վկայում է Քրիստոսի «Անմիտ մեծահարուստի մասին» առակը. «Ապա ժողովրդին ասաց. «Տեսե՛ք, որ զգույշ լինեք ամեն տեսակ ագահությունից, որովհետև մարդու կյանքը իր կուտակած հարստության մեջ չէ»: Եվ նրանց մի առակ պատմեց ու ասաց. «Մի մեծահարուստի արտերը առատ բերք տվեցին. և նա խորհեց իր մտքում և ասաց. «Տեսնեմ ինչ կարող եմ անել, քանի որ բերքս կուտակելու տեղ չկա: Գիտեմ,— ասաց նա,— թե ինչ պետք է անեմ. կքանդեմ իմ շտեմարանները ու ավելի մեծերը կշինեմ ու այնտեղ կհավաքեմ ցորենը և իմ ամբողջ բարիքը. և ինքս ինձ կասեմ՝ ո՛վ մարդ, շատ տարիների համար ամբարված բազում բարիքներ ունես, հանգի՛ստ արա, կե՛ր, խմի՛ր ու ուրա՛խ եղիր»: Աստված նրան ասաց. «Անմի՛տ, հենց այս գիշեր հոգիդ քեզանից պահանջելու են, իսկ ինչ որ պատրաստել ես, ո՞ւմն է լինելու»: Նույնպես նաև նա, ով իր անձի համար գանձ կհավաքի և Աստուծով չի հարստանա»» (Ղուկ. 12.14–21):

Ավելին՝ Փրկչի վարդապետության համաձայն՝ «ուր ձեր գանձերն են, այնտեղ և ձեր սրտերը կլինեն» (Մատթ. 6.21), իսկ սիրտը մարդու էության կենտրոնն է, որից բխում են զգացմունքները, նախասիրությունները, խոսքերը, որոշումները՝ գործերով հանդերձ: Եվ «ոչ ոք չի կարող երկու տիրոջ ծառայել. կամ մեկին կատի և մյուսին կսիրի, կամ մեկին կմեծարի և մյուսին կարհամարհի. չեք կարող ծառայել Աստծուն և մամոնային» (Մատթ. 6.24):

Սողոմոն Իմաստունն իր «Ժողովող» գրքում փորձում է երջանկություն գտնել արեգակի ներքո, այսինքն՝ երկրային սահմաններում. «Ինչ որ աչքս ուզեց, ինձ չզրկեցի դրանից, և ոչ մի ուրախության համար սրտիս վրա արգելք չդրի» (Ժող. 2.11): Բայց իզուր, քանզի ամեն վայելքից հետո մարդու բերանում մնում է միայն մոխրի համը՝ դատարկության դառը զգացումը. ահա այն եզրակացությունը, որին նա հանգում է իր որոնումների և փորձառության ավարտին: Ադամական մեղքով պայմանավորված անխուսափելի մահը, անվերջանալի տառապանքները՝ ծննդյան օրից սկսյալ, ծերությունն ու հիվանդությունները, ամենայն վայելքն ու ուրախությունը, հարստությունն ու մինչև իսկ իմաստությունը, որը բացահայտում է գեղեցկությամբ սքողված կյանքի այլանդակությունը, ուր ամեն ինչ, մարդու կամքից անկախ, ունի իր ժամանակը՝ «ծնվելու և մեռնելու, լալու և ուրախանալու, սիրելու և ատելու, պատերազմի և խաղաղության» (3.1–9), փխրուն, դյուրաբեկ, հեղհեղուկ են դարձնում մարդու երկրային երջանկությունը: Հետևաբար, ըստ աստվածաշնորհ հեղինակի, «ունայնություն ունայնությանց» է այս աշխարհում բացարձակ երջանկության որոնումը, որը և գալիք սերունդներին ավանդված մի խորհուրդ է՝ կյանքի իմաստի փնտրտուքի անդաստանում իրական ճշմարտության ուղին գտնելու: Եվ միայն Աստծո կամքի կատարումն է՝ անխուսափելի հատուցման հեռանկարով, որ, ըստ հեղինակի, կարող է մարդուն այս աշխարհում, թեկուզև սահմանափակ, երջանկություն պարգևել, թեև Հին Կտակարանում դեռևս հետմահու երկնային բերկրալի կյանքը սոսկ մարգարեության ձևով գոյություն ուներ: ➥ *էջ 6*

Եփրեմ Ա Ջորագեղցի Կաթողիկոսի դերը



Հակոբ Հովնաթանյան. Եփրեմ Ա Կաթողիկոս, 1831 թ.

Խաչատուր Աբովյանի կյանքում մեծ դեր և նշանակություն է ունեցել Սուրբ Էջմիածինը: Ծննդյան օրից Աբովյանի ծնողներն ուխտել էին նրան ծառայության տալ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Նրանց ցանկությունն էր, որ իրենց զավակը հոգևոր կրթություն ստանա և ապագայում համալրի եկեղեցականների շարքը: 1819 թ. ապրիլին ինը տարեկան Աբովյանը հոր ուղեկցությամբ գալիս է Սուրբ Էջմիածին, նախ հանդիպում են Ամենայն Հայոց Կաթողիկոս Եփրեմ Ա Ջորագեղցու հետ: Հանդիպման ժամանակ հայրը թախանձագին խնդրում է Վեհափառին, որ իր զավակը՝ Խաչատուրը, ուսում ստանա Էջմիածնի վանական դպրոցում: Հայրապետը, Աբովյանի հոր խնդրանքին ի պատասխան, ասում է. «Քո հայրը առաքինի մարդ էր, ես և իմ վանքը նրա բարեգործությունների համար չափազանց երախտապարտ ենք.... Դրա համար էլ այժմ մեզ ուրախություն է այս երեխային ընդունելով՝ քո օջախին մի չնչին ծառայություն մատուցել»: Ապա դառնալով Խաչատուրին՝ օրհնում է նրան և ասում. «Մխիթարվի՛ր, զավակս, այժմ հայրդ կգնա, իսկ մայրդ քեզ այլևս չի տեսնի. այսուհետև ես կլինեմ քո հայրը. մո՛ռ արի, գրկի՛ր ինձ ու համբուրիր ձեռքս» (Պ. Հակոբյան, Խ. Աբովյան, Երևան, 1967, էջ 108):

Հենց ամենասկզբից պատանի Աբովյանն արժանանում է Եփրեմ Հայրապետի բարիաճ և ջերմ վերաբերմունքին, և դա տարիներ հետո վերածվում է փոխադարձ վստահության: Եփրեմ Կաթողիկոսը հավատարիմ է մնում իր հայրապետական խոստմանը՝ «....այսուհետև ես կլինեմ քո հայրը»: Այնքան խոր հետք է թողել Հայրապետը Աբովյանի կյանքում, որ տարիներ անց նրան բնութագրել է հետևյալ կերպ. «Հայերի մեջ մինչև այժմ էլ սուրբ համարվող բարերար և բարեպաշտ Կաթողիկոս Եփրեմը» (Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. VII, Երևան, 1956, էջ 176–177): Իսկ մեկ այլ առիթով գրում է. «....պետք է պարզապես խոստովանեմ, որ նրա մի քանի չափազանց դաստիարակիչ խրատները, որ սովորություն ուներ տալ այդ պատկառելի ծերունին ինձ, մինչև օրս էլ այնքան թանկագին, այնքան հաճելի են եղել ինձ համար, որ ես չափազանց ապերախտ կլինեի, եթե դրանք մոռանայի» (Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. VIII, էջ 306):

Աբովյանը Եփրեմ Կաթողիկոսի հետ ազգակցական կապ ուներ, և դա նույնպես նպաստել էր նրանց մտերմությանն ու ջերմ հարաբերությանը: Այդ բարեկամական, խորապես մարդկային փոխհարաբերությունների մասին Աբովյանը հետաքրքիր մանրամասներ է պատմում. «....Կաթողիկոս Եփրեմը մանկությանս տարիներին ինձ «իմ գառնուկ» էր անվանում, իսկ պատանեկությանս շրջանում, ներեցեք անհամեստ խոստովանությանս համար, ինձ համարում էր «իր Ռափայելը»» (Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. VII, էջ 177): «Իր գառնուկն» էր անվանում՝ նրա հետ ունեցած ազգակցության, ինչպես նաև կարմրաթուշ, լիքը և թարմ տեսքի համար:

Եփրեմ Կաթողիկոսն աչքի ծանր հիվանդություն ուներ, և նրան անհրաժեշտ էր դեղ, որով հնարավոր կլիներ մեղմել խնդիրը: Նա դեղ բերելու խնդրանքով դիմում է Աբովյանին, և վերջինս, անսալով Հայրապետի խնդրանքին, գնում և բերում է: Այն պետք էր բերել Սարդարապատի բերդից, սակայն հարկ է նշել, որ այդ օրերին վերոնշյալ վայրում մոլեգնում էր սարսափելի ժանտախտ, որի պատճառով բազմաթիվ մարդիկ էին մահանում: Իրեն վտանգելով՝ Աբովյանը գնում է Սարդարապատ, գիշերում այնտեղ, ապա զինվորական բժիշկ Ալեքսեյ Ֆեոդորովիչ Տենյուկովից վերցնում դեղն ու բերում Մայր Աթոռ, և հենց այդ օրվանից Եփրեմ Կաթողիկոսը նրան անվանում է «իր Ռափայել»: Ճիշտ է, Աբովյանը վարակվում է ժանտախտով և մեկ ամիս տառապելուց հետո փրկվում, բայց կատարում է Հայրապետի ցանկությունը:

Իսկ ինչո՞ւ է Եփրեմ Կաթողիկոսը Աբովյանին անվանել «իր Ռափայել»: Այս անվանման հիմքը սուրբգրային է: Հին Կտակարանի Տոբիթ գրքում պատմվում է, թե ինչպես բարեպաշտ Տոբիթի որդի Տուբիա Ռափայել հրեշտակի օգնությամբ գտնում է իր հոր տեսողության բժշկման դեղը (Տոբիթ Զ): Սուրբգրային այս վկայության օրինակով Եփրեմ Կաթողիկոսը Աբովյանին անվանում է «իր Ռափայել»՝ ցույց տալով իր հայրական սերն ու գնահատանքը նրա նկատմամբ:

Անչափ տպավորիչ է Եփրեմ Կաթողիկոսի և Խաչատուր Աբովյանի հրաժեշտի պահը, երբ Աբովյանը որոշել էր ուսման նպատակով թողնել Սուրբ Էջմիածինն ու մեկնել արտերկիր: Սակայն մինչև հրաժեշտի պահին հասնելը՝ Աբովյանը պետք է հաղթահարեր մի քանի ծանր ու դժվարին փորձություններ: Այդ ժամանակ Եփրեմ Կաթողիկոսն արդեն կուրացել էր և վատառողջության հետևանքով անգործունակ դարձել, իսկ Աբովյանի հեռանալուց մի քանի ամիս անց՝ 1830 թվականին, թողնում է Հայրապետական գահը: Ընդգծելու համար նրանց վերջին հանդիպման կարևորությունը Աբովյանի կյանքում՝ անհրաժեշտ է նաև ներկայացնել դրան նախորդող դեպքերն ու իրադարձությունները:

Վաղուց Աբովյանը երազում էր ուսման մեկնել, սակայն այն սկզբում միայն ցանկություն էր, որի մասին գրում է. «....ես գիտեի Եվրոպա, Մոսկվա և Վենետիկ անունները, որոնցից երկուսը՝ հատկապես նրա համար, որ այնտեղ էին գտնվում հայկական ամենալավ ուսումնական հաստատությունները: Դեպի նրանց, դեպի նրանց էր ձգտում հոգիս դյութական ուժով: 15 տարեկան հասակից հենց նրանք են եղել իմ անմոռաց երազանքները: Միջոցներ չունեի, և շատերին արած իմ խնդրանքը՝ ինձ այնտեղ ուղարկելու մասին, մնաց առանց որևէ ուշադրության, առանց հետևանքի՝ իմ օգտին: Ես ցանկանում էի ավելի շատ կրթություն ձեռք բերել, որպեսզի հետագայում հոգևորական կոչումը չկրեմ առանց գիտելիքների և արժանիքների» (Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. VII, էջ 177):

Աբովյանի՝ արտերկիր մեկնելու և ուսում ստանալու ցանկության վրա մեծ հետք թողեց, դեռ ավելին, այն բորբոքեց Դորպատի համալսարանի պրոֆեսոր Ֆրիդրիխ Պարրոտը. «Հայտնվեց Պարրոտը՝ իմ փրկարար հրեշտակը: Տեսնելով բարությամբ լի նրա առաջին հայացքը՝ հոգիս զգաց իմ բարեկամ հովանավորին» (Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. VII, էջ 178): Վերջինս 1829 սեպտեմբերի 8-ին գալիս է Սուրբ Էջմիածին՝ նպատակ ունենալով մի խումբ գիտնականների հետ Արարատի գագաթը բարձրանալու: Նրանց՝ Մայր Աթոռում եղած օրերին Աբովյանին կարգում են ուղեկից՝ հոգալու կարիքները: Ծանոթանալով Խաչատուրի հետ և տեսնելով նրա ունակությունները՝ Պարրոտը խնդրում է Կաթողիկոսին,

Հաբեթի սերնդաբանությունը

Հաբեթը Նոյի երեք որդիներից էր: Ծննդոց գրքում նրա անունը հիշատակվում է Նոյի արբեցության և Քամի անեծքի պատմության դրվագում, ապա՝ Նոյի սերնդաբանության մեջ՝ որպես եգեյան ծովի, Անատոլիայի, Կովկասի, Հունաստանի և Եվրասիայի այլ երկրների ժողովուրդների նախահայր: Միջնադարյան և ժամանակակից եվրոպական ավանդազրույցներում նա ներկայացվում է որպես եվրոպական ժողովուրդների նախահայր:

Հաբեթ անվան իմաստի շուրջ առաջացել են մի շարք լեզվաբանական վեճեր: Անվան իմաստի երկու հնարավոր ստուգաբանական տարբերակ կա: Առաջին՝ այն ծագում է արամերեն «*պտհ*» արմատից, որը նշանակում է «տարածել»: Այս դեպքում անունը կնշանակի «թող Նա տարածի»՝ ըստ Ռաշիի (Շլոմո Յիցչակի, մոտ 1040–1105 թթ.) մեկնաբանության: Երկրորդ՝ եբրայերեն *«յպհ»* արմատից բխեցնելու դեպքում այն կնշանակի «գեղեցկություն», և անվան իմաստը կլինի «գեղեցիկ»:

Հաբեթն առաջին անգամ հիշատակվում է Հին Կտակարանում՝ որպես Նոյի երեք որդիներից մեկը՝ փրկված ջրհեղեղից: Ծննդոց գրքում Նոյի որդիները միշտ նույն հաջորդականությամբ են թվարկվում՝ Սեմ, Քամ և Հաբեթ: Ծննդոց 9:24-ում Քամն անվանվում է «կրտսեր որդի», իսկ Ծննդոց 10:21-ում Սեմը հիշատակվում է որպես «Հաբեթի ավագ եղբայր»: Ժամանակակից ուսումնասիրողների մեծ մասն ընդունում է, որ Սեմ–Քամ–Հաբեթ հաջորդական թվարկումն արտացոլում է նրանց ծննդյան կարգը, բայց դա միշտ չէ, որ այդպես է. Մովսեսն ու Ռաքելը նույնպես հայտնվում են նման ցանկերի սկզբում՝ չնայած նրանց՝ կրտսեր եղբայր-քույր լինելու հստակ նկարագրություններին: Այնուամենայնիվ, Հաբեթը ռաբբինական գրականության մեջ համարվում է Նոյի ավագ որդին:

Ջրհեղեղից հետո Հաբեթը հիշատակվում է Նոյի արբեցության պատմության մեջ: Քամը տեսնում է Նոյին հարբած ու մերկ իր վրանում և պատմում է իր եղբայրներին,



Ջեյմս Տիսո, Սեմը, Քամը, Հաբեթը, 1896—1902 թթ.

որոնք այնուհետև ծածկում են իրենց հորը թիկնոցով՝ ամաչելով նրա մերկությունից: Երբ Նոյն արթնանում է, նա անիծում է Քամի որդուն՝ Քանանին, և օրհնում Սեմին ու Հաբեթին. «Օրհնյալ լինի Տերը՝ Սեմի Աստվածը, իսկ Քանանը նրան ծառա թող լինի: Աստված ընդարձակի Հաբեթին, և նա Սեմի վրաններում բնակվի, իսկ Քանանը ծառա լինի նրան» (Ծննդ. 9:26–27): Ծննդոց գրքի 10-րդ գլխում նկարագրվում է, թե ինչպես է ջրհեղեղից հետո երկիրը բնակեցվում Նոյի որդիներով՝ սկսած Հաբեթի սերունդներից. «Հաբեթի որդիները՝ Գոմեր, Մագոգ, Մադա, Հավան, Թոբել, Մեսեք և Թիրաս: Գոմերի որդիները՝ Ասքանաս, Րիփաթ և Թորգոմա: Հավանի որդիները՝ Եղիսա, Թարսիս, կիտացիներն ու դոդացիները: Սրանցից բաժանվեցին ծովեզրյա ազգերն իրենց երկրներով՝ ամեն մեկն իր լեզվով, իրենց ազգերով իրենց տոհմերում» (Ծննդ. 10:2–5):

Հաբեթը կարող է լինել հունարեն Iapetos անվան տառադարձությունը, որը հելլենական ժողովուրդների նախնին է: Նրա որդիներն ու թոռները բնակվում են Եգեյան ծովը, Հունաստանը, Կովկասն ու Անատոլիան ընդգրկող աշխարհագրական տարածքում՝ Հոնիա/Հավան, Հռոդոս/Ռոդանիմ, Կիպրոս/Կիտիմ և Արևելյան Միջերկրածովյան տարածաշրջանի վայրերում: «Հաբեթի օրհնության» իմաստը, կարծես, այն է, որ Հաբեթը (հունական ծագում ունեցող ժողովուրդ) և Սեմը (իսրայելացիները) համատեղ պիտի կառավարեին Քանանին (Պաղեստինը):

19-րդ դարից մինչև 20-րդ դարի վերջը Հաբեթը սովորաբար համարվում էր փղշտացիների հայր, որոնք իշխում էին Քանանի վրա Իսրայելի և Հուդայի նախամիապետական և վաղ միապետական շրջանում: Այս տեսակետը համապատասխանում էր Ծննդոց գրքի ծագման մասին ըմբռնմանը, համաձայն որի՝ այն գրվել է՝ սկսած Սողոմոն թագավորի ժամանակներից, երբ փղշտացիները դեռևս գոյություն ունեին (նրանք անհետացան պատմությունից ասորեստանցիների կողմից Քանանի նվաճումից հետո): Կան ապացույցներ, ըստ որոնց՝ փղշտացիները ծագել են Եգեյան ծովից եկած հույն ներգաղթյալների խմբից: Ներգաղթյալների խումբը Քանանում բնակություն է հաստատել Ք. ա. մոտ 1175 թ.՝ ուշ բրոնզի դարաշրջանի փլուզման ժամանակ: Ժամանակի ընթացքում նրանք խառնվել են բնիկ քանանական հասարակությունների հետ և փոխառել նրանցից որոշ սովորույթներ՝ պահպանելով իրենց յուրահատուկ մշակույթը: Այս տեսակետը գլխավորապես հիմնված է այն փաստի վրա, որ հնագետները Միջերկրականի ափամերձ հարթավայրերում և հարակից տարածքներում փղշտացիների ժամանակաշրջանին պատկանող շերտեր պեղելիս նյութական մշակույթի (արձանիկներ, խեցեղեն, կրակարաններ և այլն) նմանություններ են հայտնաբերել էգեյան-հունական և փղշտացիների մշակույթի միջև, ինչը ենթադրում է ընդհանուր ծագում: Սակայն Ծննդոց 10:14-ը որպես փղշտացիների նախահայր նույնականացնում է Քամին, այլ ոչ թե Հաբեթին: ➥ *էջ 8*

Խաչատուր Աբովյանի կյանքում

որ Աբովյանը ևս միանա իրենց արշավախմբին՝ որպես վանքի ներկայացուցիչ: Ստանալով Հայրապետի օրհնությունը՝ Աբովյանը միանում է նրանց և բարձրանում Արարատի գագաթ. «Եվ Նոյան սրբազան լեռան կատարին Սուրբ Խաչի հետ միասին բարձրացան և՛ իմ ուխտն ու աղոթքը. բայց դեռևս հեռու էր այն վայրը, որտեղից ես պիտի դեպի Արարատը վերադառնայի՝ կանաչ ճյուղը ձեռքիս» (Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. VII, էջ 178):

Արարատի գագաթ վերելքից հետո, երբ Աբովյանը հրաժեշտ է տալիս Պարրոտին, խնդրում է նրան պետական միջոցներ ձեռք բերել, որ կարողանա ուսումը շարունակել արտերկրում. «Պարրոտը մեկնեց՝ դեմքի սառը արտահայտությամբ և սառը եղանակով ասելով. «Կջանամ, բայց ոչ մի հաստատ բան Ձեզ խոստանալ չեմ կարող»: Ինձ միայն հարկավոր էր, որ նա իր երկաթյա կամքով միջնորդեր ոչ թե հոգևոր կոչումից, այլ մի քանի տարով ինձ իմ ծառայությունից ազատելու մասին» (Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. VII, էջ 178):

Արդեն 1829 թ. նոյեմբերին Աբովյանը Սինոդին հատուկ խնդրագիր է ներկայացնում՝ խնդրելով օրինական կարգով թույլ տալ իրեն մեկնել արտերկիր՝ ուսման: Սինոդի անդամները խոստանում են նրան գարնանը իրենց հաշվին ուղարկել Մոսկվա՝ Լազարյան ճեմարանում ուսանելու, միայն թե. «….թողնեի իմ մտադրությունը՝ հետևելու այդ լյութերականներին, որոնք չեն ճանաչում ոչ պահք, ոչ սրբերին» (Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. VII, էջ 178): Այստեղ միջանկյալ նշենք, որ դեռևս 1821 թ. Աբովյանը, շնորհիվ Մայր Աթոռի միաբան և իր հեռավոր ազգակից Անտոն արքեպիսկոպոս Մուղնեցու ջանքերի, մեկնել էր Թիֆլիսի հայկական ուսումնարան՝ կրթությունն ավարտելու և ռուսերեն սովորելու: Չորս տարի հետո վերադարձել էր Էջմիածին և նշանակվել Սինոդի և Կաթողիկոսի քարտուղար ու թարգման միաժամանակ (տես Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. VII, էջ 177): Պետք է ասել, որ Մայր Աթոռի միաբանության համար Աբովյանի՝ Սուրբ Էջմիածնից հեռանալը մեծ կորուստ էր. դա էր պատճառը, որ ամեն կերպ փորձում էին նրան պահել այնտեղ: Օրինակ՝ երբ Վեհափառ Հայրապետը օտարազգի հյուրեր էր ունենում, Աբովյանը սովորաբար ներկա էր լինում և թարգմանում զրույցը:

Սակայն երբ Աբովյանը հասկանում է, որ Սինոդի անդամներն իրեն խոստացել էին ուսման ուղարկել միայն նրա համար, որ հետ կանգնի Պարրոտին հետևելու մտադրությունից, վճռում է թողնել Մայր Աթոռը: Նրա այս քայլը դժկամությամբ է ընդունվում Սինոդի կողմից, և ինչպես Աբովյանը գրում է. «Սինոդը, միաբանության ցուցակից ջնջելով իմ անունը, ինձ նզովք կարդաց՝ օրհնության փոխարեն….Վայ նրան, ով դրանից հետո համարձակվեր ինձ նույնիսկ ողջունել: Մութ գիշերին, առանց մի կոպեկի, դուրս եկա վանքից և գիշերն անցկացրի փեսայիս տանը…. Ընկերս՝ այժմ Բեսարաբիայում ուսումնական քահանա Մսուրը, գաղտնաբար իր փոքրիկ մուշտակն ինձ ուղարկեց» (Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. VII, էջ 178–179):


Տեղի ունեցած դեպքերի մասին Հովհաննես Ղրիմեցին ծածուկ լուր է տալիս Եփրեմ Կաթողիկոսին: Հայրապետը կարգադրում է Աբովյանին անհապաղ տալ արձակման թուղթ, և նույն Ղրիմեցու միջոցով ուղարկում է տասը ռուբլի արծաթ և ավելին՝ գիշերը հրավիրում է իր մոտ՝ հրաժեշտի: Աբովյանն այցելում է Եփրեմ Կաթողիկոսին, երբ վանքում բոլորը խոր քնի մեջ էին: Եփրեմ Հայրապետը՝ իբրև սիրող հայր, ընդունում է նրան և տալիս իր օրհնությունը:

Հայրապետի ջերմ խոսքերը անջնջելիորեն դաջվում են Աբովյանի հոգում. «Բուն նահապետական ժամանակների Աբրահամներին նմանվող այդ աստվածային ծերունու արտասուքն ու ձայնը տասնութ տարուց հետո՝ այսօր էլ թափանցում են մինչև սրտիս խորքը: «Մոտեցիր ինձ, իմ Ռափայել,– ասաց նա ինձ արդար Իսահակի ձայնով, մի այնպիսի ձայնով, որ այժմ էլ ցնցում է իմ ամբողջ էությունը,– մոտեցիր ինձ, բարեպաշտ Աբովի սիրասուն զարմ. բարի է քո նպատակը, և արգասավոր՝ քո ուղին, բայց խոստացիր ինձ չմոռանալ հայրենիքդ և հայրենի եկեղեցիդ. ահա՛ իմ ողջագուրանքը, ահա՛ իմ օրհնությունը, ահա՛ և քո արձակման գիրը, որ հանում է քեզ ո՛չ թե քո եղբայրակիցների շարքից, ո՛չ թե իմ սրտից, այլ ծառայությունից»» (Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. VII, էջ 179):

Աբովյանը դժվարին կացության մեջ էր. գրեթե բոլորը նրանից երես էին թեքել՝ կյանքի նոր ուղի ընտրելու և Սուրբ Էջմիածնից հեռանալու համար: Սինոդի անդամներն իրենց ծանր խոսքերով խոցել էին նրա սիրտը, բայց Եփրեմ Կաթողիկոսն իր այս խոսքերով և վերաբերմունքով մեղմացնում է նրա հոգու և սրտի խոր ցավը: Հայրապետի օրհնությանը հաջորդում է նրանց հրաժեշտի պահը. «….դողդոջուն ձեռներով և հայրական սիրով գրկեց ինձ, համբուրեց, իր բարերար աջը տվեց համբուրելու, տվեց նաև արձակման թուղթը, և ես վեր կացա, հեռացա նրանից, որպեսզի նրա սուրբ, երանելի հիշատակը հավիտյանս օրհնեմ» (Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. VII, էջ 179):

Ստանալով Վեհափառ Հայրապետի հայրական օրհնությունը՝ Աբովյանը 1829 թ. դեկտեմբերի 5-ին հեռանում է Սուրբ Էջմիածնից: Նա անգամ չի այցելում ծնողներին՝ հրաժեշտ տալու՝ պատճառաբանելով, որ չտեսնի նրանց մորմոքն ու արցունքները, թերևս նաև այն պատճառով, որ չլինի թե նրանց նկատմամբ տածած որդիական սիրուց հետ կանգնի իր ընտրած ուղուց:

Այս ամենով հանդերձ՝ հետագայում Աբովյանը Մայր Աթոռում իր անցկացրած տարիների մասին գրում է ջերմությամբ և գնահատանքով. «Էջմիածնում չէր մի՞թե, որ ես իմ կյանքում առաջին անգամ ճանաչեցի աշխարհը, մի աշխարհ, որ չնայած էությամբ



Կյուդվիգ ֆոն Մայդել. Խաչատուր Աբովյան, 1831 թ.

միապաղաղ, բայց լի էր բազմազան տեսարաններով, զգայություններով, և՛ սրտակեղեք, և՛ հոգեպարար, և՛ սարսափելի, և՛ հաճելի իրադարձություններով, որ ես ապրել եմ՝ ինը տարեկան հասակից սկսած…. Հենց այստեղ էլ ես կազմեցի իմ առաջին ըմբռնումները կյանքի, աշխարհի մասին» (Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. VII, 175–176):

Ինչպես տեսանք, Աբովյանը տարբեր առիթներով արժևորել է իր կյանքում Եփրեմ Կաթողիկոսի դերն ու նշանակությունը, և այդ հուշերը կարևոր են՝ բացահայտելու նաև Եփրեմ Ջորագեղցի Կաթողիկոսի կերպարը՝ Հայրապետական ծանր ու դժվար ծառայությունից զատ: Մեր առաջ հառնում է գորովագութ հայրը՝ լի բարությամբ և սիրով:

Արամայիս սրկ. ԱԶԻԶՅԱՆ
Մարիամ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Յակոբ Պատրիարք Նալեան. ***Ձեռնադրութեան, այսինքն՝ քահանայութեան խորհուրդի մասին***

Ձեռնադրութիւնը Եկեղեցւոյ նշանն է, որով ձեռնադրուածին հոգևոր իշխանութիւն կը պարգևուի: Արդ, ձեռնադրութիւն ըսելով՝ կը զանազանէ քահանայութիւնը ռամիկ ժողովուրդէն եւ խառնիճաղանճէն: Իսկ նշան ըսելով, կ՚որոշէ նշան չունեցողներէն, որոնք որևէ մէկ ձեռնադրութեամբ նշանաւորուած չեն: Իսկ եկեղեցւոյ ըսելով, կը զանազանէ ձեռնադրութիւնն ու նշանը ուրիշ նշաններէ: Օրինակ՝ Նոյի ժամանակ Աստուծոյ հաշտութեան նշան իբրև՝ ծիածանը ըսուեցաւ. Աբրահամի ժամանակ՝ թլփատութիւնը: Երկինքի նշաններն են տասներկու կենդանակերպերը: Հիւսիսարևելեան պաղ հովը պարզութեան [եղանակի] նշան է, արևելեան ամպը՝ անձրևի նշան, գարնան նշանը՝ ծառերուն տերևն է, իսկ ձմռան նշանն ալ՝ ձիւնն է: Այսպէս ալ եկեղեցւոյ նշանը ձեռնադրութիւնն է. ատոր համար նախ ըսուեցաւ, թէ ձեռնադրութիւնը նշան է:

Սակայն նշանը տեսակ-տեսակ [զանազան] կ՚ըլլայ. եկեղեցւոյ նշանը ինչպիսի՞ նշան ըսուեցաւ: Որովհետև եկեղեցի անունը հրեշտակներուն եւ ընտրեալներուն համար կ՚ըսուի, եւ թէեւ հրեշտակները՝ երկնային քահանայապետութիւններ կ՚ըսուին, սակայն, քահանայութիւնը ձեռնադրութեամբ չեն առած, այլ՝ ստեղծմամբ. այդ պատճառով ըսուեցաւ, թէ ձեռնադրուածին հոգևոր իշխանութիւն կը պարգևուի: Քանի որ չար եկեղեցի եւ չարերու ժողով ալ կայ, որ հոգևոր իշխանութիւնը չունի՝ ձեռնադրութեամբ. ատոր համար ըսուեցաւ հոգևոր իշխանութիւն: Որովհետև, ինչպէս Աստուած երկրաւորները երկնաւորներու միջնորդութեամբ կը կառավարէ, այդպէս ալ եկեղեցին քահանայական իշխանութեամբ կը կառավարէ: Արդարև, նախքան քահանայութիւնը գլուխին մազը խաչձև կը կտրուի, եւ գագաթը՝ թագի ու կլոր պսակի նման՝ բաց կը ձգուի, նշանակելու համար, թէ՝ բարձրեալ Աստուծոյ սպասաւոր է, որուն ծառայելը թագաւորել է: Ինչո՞ւ. որովհետև եկեղեցականներուն թագաւորութիւնը այս աշխարհէն չէ, ատոր համար մազերը կտրելէն ետք անոր ձեռքը աւել կը տրուի, որ կը ցուցնէ, թէ՝ Աստուծոյ տունը աւլողը երկինքի մէջ պիտի թագաւորէ, եւ թէ՝ լաւ է Աստուծոյ տունը աւլել, քան մեղաւորներու յարկերէն ներս բնակիլ:

Ձեռնադրութեան խորհուրդին համար վեց բան անհրաժեշտ է:

Նախ՝ ձեռնադրողը եպիսկոպոս ըլլայ:

Երկրորդ՝ նիւթը, որ է օծումը ու պատշաճաւոր գործածելիքը, որոնք կը տրուին ձեռնադրուողին՝ շօշափելու համար:

Երրորդ՝ խօսքին ձեւը:

Չորրորդ՝ ձեռնադրուողը պէտք է արու ըլլայ, որովհետև կին մարդը ընդունակ չէ ձեռնադրութեան կնիքին:

Հինգերորդ՝ ուղիղ դիտաւորութիւն:

Վեցերորդ՝ ձեռնադրուողը պէտք է մկրտուած ըլլայ:

Արդարև, քահանայութեան կարգն ու աստիճանները եօթն են:

Առաջինը դռնապանութիւնն է: Դռնապանին գործն է սրբութեան վայրը պահել ու պահպանել պիղծերէն ու բանադրուածներէն: Ասիկա Քրիստոս ցոյց տուաւ մեզի, երբ չուանէ խարազանը առաւ եւ անարժան վաճառողներն ու գնողները տաճարէն վռնտեց [տես Յովհ. 2.13–16]:

Երկրորդը ընթերցողութիւնն է: Ընթերցողին գործն է կարդալ մարգարէական գիրքերը: Ասիկա Քրիստոս ցոյց տուաւ մեզի, երբ Եսայի մարգարէին գիրքը բացաւ եւ ոտքի ելաւ ընթերցելու [տես Ղուկ. 4.14–21]:

Երրորդը երդմնեցողութիւնն է: Երդմնեցողին գործն է մկրտութեան եկողները հրաժարեցնել սատանայէն, աղօթքներով դևերը հալածել դիւահարներէն՝ երդմնեցնելով Տիրոջ անունով: Ասիկա Քրիստոս յայտնեց մեզի՝ դևերը հանելով ու առաքեալներուն ըսելով, թէ՝ հանեցէք դևերը, հիւանդները բժշկեցէք [տես Մատթ. 10.8]:

Չորրորդը ջահընկալութիւնն է: Ջահընկալին գործը վառած մոմերը ձեռքը բռնելն է Սուրբ Խորհուրդներու եւ Աւետարան կարդալու ընթացքին: Վառուած մոմը կը ցուցնէ Աւետարանին լոյսը: Ասիկա Քրիստոս յայտնեց մեզի, երբ ըսաւ, թէ՝ Ես եմ աշխարհի լոյսը [տես Յովհ. 8.12]. իսկ առաքեալները այն ատեն ջահընկալ ըրաւ, երբ ըսաւ անոնց, թէ՝ դուք էք աշխարհի լոյսը [տես Մատթ. 5.14–16]:

Հինգերորդը կիսասարկաւագութիւնն է: Կիսասարկաւագին գործը նուէրները առնելն է բերողներէն ու սարկաւագին տալ: Ասիկա Քրիստոս յայտնեց մեզի, երբ մէջքին գօտին կապեց ու լուաց աշակերտներուն ոտքերը [տես Յովհ. 13.4–15]: Նաեւ, սկիհը, մաղզման, գինիին ամանն ու ջուխարը սարկաւագին տանիլ, ինչպէս նաեւ սեղանին կտորները լուալն ալ կիսասարկաւագին գործն է:

Վեցերորդը աւագ սարկաւագութիւնն է, որու գործը քահանային ծառայելն է եկեղեցւոյ խորհուրդներուն ժամանակ, Աւետարան կարդալ, ողջոյնը քահանային առնելով ժողովուրդին տալ: Ասիկա Քրիստոս ցոյց տուաւ մեզի պատարագելու ժամանակ, երբ մարմինն ու արիւնը տուաւ ճաշակելու համար [տես Մատթ. 26.26–28]. ատոր համար սարկաւագը ժողովուրդին հետ Հաղորդութիւն չի ստանար, այլ՝ Սեղանին վրայ՝ քահանային հետ:

Եօթներորդը քահանայութիւնն է, որ բարձրագոյն կարգն է՝ միւս վեց աստիճաներուն վրայ: Քահանային գործն է սրբազնասուրբ պատարագը մատուցել, եւ ասիկա քահանային առաջնային գործն է: Ասիկա Քրիստոս յայտնեց մեզի, երբ Վերնատան մէջ պատարագեց եւ իշխանութիւն տուաւ անոնց [աշակերտներուն]՝ ըսելով, թէ՝ ասիկա Իմ յիշատակիս համար ըրէք [տես Մատթ. 26.26–28]: Քահանային յաջորդ գործը կապելն ու արձակելն է. կապել մեղքէն չդարձողները, եւ արձակել դարձողները. տակաւին, Քրիստոս ցոյց տուաւ քահանայութեան կարգը Ինքն Իր անձին վրայ՝ խաչին վրայ Ինքզինք պատարագելով: Եպիսկոպոսութիւնն ու հայրապետութիւնը այլ կնիք ու կարգ չեն. այլ՝ եկեղեցւոյ բարձրագոյն իշխանութիւնը, որովհետև քահանայութիւնը թագաւորութեան նման է, իսկ եպիսկոպոսութիւնն ու կաթողիկոսութիւնը՝ հոգևոր կայսրութեան նման:

Փականքն ու բանալիները երկուքն են քահանաներուն մօտ. մէկը՝ կարգին, իսկ միւսը՝ գիտութեան բանալին, քանի որ քահանան Ամենակալ Աստուծոյ հրեշտակն է, որ հոգ պիտի տանի միշտ սորվելու եւ սորվեցնելու, որպէսզի բամզաթիւ մեղքերը կարենայ զատորոշել ու զանազանել:

Բարի քահանան Աստուծոյ նման է,
մարմինով հրեշտակ եւ վերիններուն
նման է:
Չար [քահանան] դևերուն պէս է՝ լոյսէ զուրկ,
հաղորդ է կարգին [աստիճանին], բայց դատարկ՝ բարութենէն:

Շարունակելի

«Քրիստոնէական Ուսանելի», 1806

Աշխարհաբարի վերածեց
Վարանդ (Յակոբ) ՔՈՐԹՄՈՍԵԱՆԸ

Քրիստոնեությունը և հին ու նոր քաղքենիությունը

↩ *էջ 4*

Պողոս առաքյալն էլ է զգուշացնում կյանքը հարստությամբ վայելելու վտանգների մասին. «Իսկ ովքեր հարստանալ են ուզում, ընկնում են փորձության, որոգայթի և բազում անմիտ ու վնասակար ցանկությունների մեջ, որոնք ընկղմում տանում են մարդկանց դեպի կործանում և դեպի կորուստ, որովհետև բոլոր չարիքների արմատը փողասիրությունն է, որին ոմանք ձգտելով՝ մոլորվեցին հավատից և իրենք իրենց գցեցին բազում ցավերի մեջ» (Ա. Տիմ. 6.9–10): Սուրբ Գիրքը հատկապես զգուշացնում է հարստությունն անօրինությամբ կուտակելու և զեխ կյանքով ապրելու վտանգների, ինչպես և դրանց հետևող անխուսափելի պատիժների մասին. «Ահավասիկ, ձեր դաշտերը մշակած մշակների վարձը ձեզ մոտ պահեցիք. ձեր կողմից զրկվածն աղաղակում է, և հնձվորների բողոքը հասավ Ամենակալ Տիրոջ ականջին: Մեղկ կյանքով ապրեցիք երկրի վրա և շվայտացաք ու ձեր սրտերը պարարտացրիք մորթվելու օրվա համար: Զրկեցիք, սպանեցիք արդարին, որը ձեզ չէր հակառակում» (Հակ. 5.4–6): Իսկ Զաքարիայի տեսած Թռչող գերանդու տեսիլքի խորհուրդը հրեշտակն այսպես է բացատրում մարգարեին. «Դա այն անեծքն է, որ տարածվում է ամբողջ աշխարհի երեսին, որովհետև ամեն գողի մահացու պատիժը դրանով պիտի իրագործվի.... պիտի մնա նրանց տանը և պիտի սպառի այն, նրա փայտն ու քարերը» (Զաք. 5.3–4):

Տերունական աղոթքը, ինչպես և բազմաբնույթ աղերսանքներից շատերը երբեք չեն օգտագործում «ես» անձնական դերանունը, այլ՝ «մեր»-ը՝ որպես հավաքականության և սիրո դրսևորում: Բանն այն է, որ մարդը հասարակական էակ է և ի զորու չէ հասարակությունից դուրս ապրելու՝ բացառությամբ ճգնավորների, մենակյացների, որոնք այդ պակասը լրացնում են Աստծո երանելի ներկայության վայելմամբ: Իսկ հասարակության մեջ ապրելով՝ հասարակական բարիքները եսասիրաբար լիաձեռն քաղելը ավետարանական՝ իրար սիրելու պատվիրանի խախտումն է՝ հղի հասարակական ներդաշնակության և առողջ միջանձնական հարաբերությունների սասանմամբ և չափազանց վտանգավոր երկպառակություններով՝ կենցաղայինից մինչև քաղաքական: Ընդ որում՝ մարդու քաղքենիացումն սկսվում է հենց կրոնական ճշմարտությունների անտեսմամբ, ինչի հետևանքով մարդիկ հեռանում են լույսից, գիտելիքով հարստանալուց, իրար ծառայելուց, հետևաբար նաև՝ մեր-ից՝ համայնքից, հասարակությունից, ազգից, Եկեղեցուց, ապա և՝ հանդուրժողականությունից, ներողամտությունից, մեծահոգությունից, անձնազոհությունից, հայրենասիրությունից՝ կյանքի իմաստն անձնապաստանաբար միայն սին, երկրային բարիքներ կուտակելը համարելով, թյուր ու կործանարար արժեքային համակարգ ձևավորելով և հուրախություն թշնամիների՝ հեշտ պառակտվելով:

Իսկ նրանք, ովքեր հին, նոր, նորագույն ժամանակներում ըմբոստացել և այսօր էլ դեռ ըմբոստանում են Եկեղեցու դեմ՝ պատճառն առիթից չտարբերելով, խաբելով իրենց, թե այդ բանը հանուն դավանանքի, գաղափարախոսության, գիտության կամ ինչ-ինչ այլ բաների են անում, պետք է ճիշտ հետևություն անեն Ն. Բերդյաևի վերոբերյալ հոդվածի եզրափակիչ խոսքից. «Առջևում երկու ճանապարհ ենք տեսնում՝ իրար թշնամի երկու հակոտնյա ուժերի ուղի. մի կողմից՝ մարդկային ինքնաստվածացում և ինքնագոհություն, այս աշխարհի բարիքների պաշտամունք և համընդհանուր դիմազրկում, մյուս կողմից՝ ճշմարիտ Աստծուն ծառայություն, երկրայինը երկնայինի, ժամանակավորը հավերժականի հետ միավորում, անձի հաստատումն իր բացարձակ կոչմամբ»:

Աստվածաշնչի ուսուցմամբ՝ հարստությունը ոչ միայն վնասակար է, եթե հպարտացնում է մարդուն, զեխ ու շվայտ կյանքի պատճառ հանդիսանում, դառնում կյանքի միակ իմաստը, այլև ստրկացնում է, ինչպես ասում է Ս. Հերոնիմոսը. «Ով ստրկանում է հարստությանը, պահպանում է այն, ինչպես ստրուկը, իսկ ով թոթափել է իր ուսերից այս ստրկական լուծը, նա տնօրինում է դրան տիրոջ օրինակով»: Իսկ այս նույն հարստությունը, եթե ճիշտ ձեռքերում է և աստվածահաճո խորհուրդով է կիրառվում, երանվում է բազում օրհնություններով՝ որպես սիրո բարձրագույն դրսևորում հասարակության նկատմամբ, որպես Քրիստոսի՝ իրար սիրելու պատվիրանի կատարում (Յովհ. 13.34).

«Երանի՜ նրան, ով մտածում է աղքատի և տնանկի մասին. փորձանքի օրը Տերը կփրկի նրան: Տերը կփրկի ու կպահպանի նրան, երանելի կդարձնի երկրի երեսին և չի մատնի նրան իր թշնամիների ձեռքը: Տերը նրան կօգնի տառապանքի մահճում և նրա անկողինն ամբողջովին կմաքրի իր հիվանդությունից» (Սաղմ. 40.2–4, տես նաև Մատթ. 5.7, Ա Տիմ. 6.17–19):

Այսօր աշխարհում իշխում է սպառողական գաղափարախոսությունը՝ ավանդական՝ ընտանեկան, ազգային և հոգևոր արժեքների մերժմամբ, և մոլորեցնում «քաղցր կյանքի» գայթակղիչ խոստումներով, բայց իրականում մարդ արարածին մատնում մենության՝ լավագույն դեպքում ծերանոցում մահը դիմավորելու հեռանկարով: Այն, որ շների ու կատուների և այլ կենդանիների ընկերակցությունն է ժամանակակից մարդու ընտանիքի փոխնյութն ու միակ մխիթարությունը դառնում, այն, որ զարգացած երկրներում ինքնասպանությունների և ընկճախտերի ու հոգեկան ուրիշ խանգարումների միջին վիճակագրականը գերազանցում է ավանդապահ երկրների նմանօրինակ ցուցանիշները, որքան ցավալի, նույնքան էլ օրինաչափ երևույթ է այս գիտակցության կրողների համար: Իսկ այն, որ այս աշխարհը Աստվածաշնչում կոչվում է «տրտմության հովիտ» (Սաղմ. 83.7), պատահական չէ՝ ադամական մեղքով պայմանավորված տառապանքի ու մահվան մատնված մարդկության խորհրդով, մարդկություն, որի սիրտը նախածնողների մեղանչմամբ խաթարվեց, մարդու մեջ մանկությունից հաստատվեց մեղքի և չարի նկատմամբ հակումը, ինչն էլ, իր հերթին, Կայենի ձեռամբ իր եղբայր Աբելի սպանությունից ի վեր պատճառ դարձավ ազգամիջյան և քաղաքացիական անվերջանալի պատերազմների, ընտանեկան և հասարակական խժդժությունների, հարստահարությունների և իրար ստրկացնելու, բարիքների և ազդեցության ոլորտների վերաբաշխման համար անողոք պայքարի:

Ընդ որում՝ մի բան է քաղքենիության դրսևորումը խաղաղ ժամանակներում, մի այլ բան՝ օրհասական պահերին:

Սուրբ Գիրքը պատվիրում է սիրել իրար, հարգել, հոգ տանել մեկը մյուսի հանդեպ մեծահոգությամբ և անձնազոհությամբ, ինչպես Քրիստոս, հանուն մարդկության փրկության, չարչարվեց և խաչի վրա մահ ընդունեց. «Ավելի մեծ սեր ոչ ոք չունի, քան այն, որ մեկն իր կյանքը տա իր բարեկամների համար» (Յովհ. 15.13):


Գիրք գրոցում անձնազոհության՝ որպես սիրո բարձրագույն դրսևորման բազմաթիվ այլ դրվագներ էլ կան, ինչպես՝ գեղեցկուհի Հուդիթի և էսթեր թագուհու արարքները, որոնք ժողովրդի օրհասական պահին, մահն աչքի առջև ունենալով, հերոսություն գործեցին և իրենց անունները հավերժացրին պատմության մեջ: Ուրիշ այլ բազմաթիվ հերոսների անուններ էլ կան և՛ Աստվածաշնչում, և՛ Վարք սրբոցներում, և՛ Հայոց ու համաշխարհային պատմության ու գրականության էջերում, խնկելի անուններ, որոնց անձնազոհության շնորհիվ փրկվում են ազգերը և նրանց նվիրական ժառանգությունները:

Աստված շարունակ հոգ է տանում մեր մասին, զորացնում ու մխիթարում մեզ, անձանձիր շնորհներ պարգևում: Եվ հենց այդ զորություններով էլ կարող ենք հաղթահարել մեր մեղքերն ու մոլությունները, շտկել սխալներն ու ձերբազատվել մոլորություններից, այդ թվում նաև՝ դժվարճանաչելի հոգեկործան քաղքենիության ճահճից, քանզի չարիքը հենց դա է՝ մեր տգիտությունը, մեր ծուռ արժեքային համակարգը: Իսկ Աստծո օգնությամբ թոթափելով այդ ամենը՝ մինչև իսկ կարող ենք մեր իսկ ձեռքերով մեր բաղձալի երկիրը կառուցել՝ այլ երկրներում ապրել երազելու փոխարեն, և այս աշխարհում ոչ միայն իրական խաղաղություն, այլև բարօրություն գտնել: «Եթե Իմ ժողովուրդը, որի վրա Իմ անունն է դրված, զղջա, աղոթի և Իմ երեսը փնտրի ու հետ դառնա իր չար ճանապարհներից, Ես էլ երկնքից կլսեմ, կներեմ նրանց և կբուժեմ նրանց երկիրը» (Բ Մնաց. 7.14):

Գրիգոր ԴԱՐԲԻՆՅԱՆ

Հովհաննես Թումանյանի կյանքի ուշագրավ էջերից

Հովհաննես Թումանյանի մասին հուշագրական զգալի ժառանգություն է ստեղծված: Առանձնանշելի են «Թումանյանը ժամանակակիցների հուշերում», Ն. Թումանյանի «Հուշեր և զրույցներ» գրքերը: Թումանյանի մասին հուշեր առկա են նաև նրա ժամանակակիցներին նվիրված հուշապատումներում («Ղազարոս Աղայանը ժամանակակիցների հուշերում», «Վահան Տերյանը ժամանակակիցների հուշերում», Վախթանգ Անանյանի հուշագրումներում, «Ռոմանոս Մելիքյանը ժամանակակիցների հուշերում» «Մեծերը մեծերի մասին» գրքում և այլն): Օրինակ՝ հուշագիրներ Մ. Նարյանը, Ռ. Լուսինյանը, Վ. Բալյանը, Հ. Պողոսյանը, Բ. Ջանյանը, Լ. Հախվերդյանը «Ավետիք Իսահակյանը ժամանակակիցների հուշերում» գրքի տարբեր էջերում Իսահակյանի դիմանկարին զուգահեռ ներկայացնում են Հ. Թումանյանի դիմանկարի որոշ նրբերանգներ: Բանաստեղծի մասին ուշագրավ հիշողություններ կան նաև Մ. Թումանյանի «Իմ համառոտ կենսագրությունը և իմ հիշողությունները» գրքում և Գ. Մահարու «Պատանեկություն» վիպակում: Թումանյան բնորդը կերպավորվում է նաև հարազատների, գրողների, մտերիմների ու գործընկերների նամակներում և օրագրերում: Նշենք, որ հուշագրության որոշ բնագրեր հյուսվում են երկու անձերի շուրջ ևս. օրինակ՝ Մ. Աղայանի «Ղազարոս Աղայանն ու Հովի. Թումանյանը» հուշագրությունը:



Էդ. Իսաբեկյան. Հովհաննես Թումանյան, 1956 թ.

Հուշերում Հ. Թումանյանի դիմանկարն ամբողջանում է մի քանի սկզբունքներով, որոնցից էականը թերևս հուշագրի առաջին տպավորությունն է: Այս առումով նկատելի են ուշագրավ փաստեր. հուշագիրների մեծ մասն իբրև սկիզբ արձանագրում է բանաստեղծի հետ իր առաջին հանդիպումը, ինչը անմոռանալի տպավորություն է թողնում: Հեղինակի հիշողության հոսքերում Հ. Թումանյան բնորդը նախևառաջ ներկայանում է իր արտաքին նկարագրով: «Թումանյանին ես առաջին անգամ տեսա հեռվից, Սոլոլակի Սերգեևսկայա փողոցում,– հիշում է Դ. Դեմիրճյանը, ապա անմիջապես անցնում բանաստեղծի արտաքին նկարագրությանը:– Արագ, մեծ քայլերով գնում էր նա…. Մուգ դեղնագույն վերարկու ուներ հագին՝ նույն կտորի հաստ հետնագոտիով, ահագին մի ձեռնափայտ՝ առանց գլխի: Սև շլյապան հովանի էր անում կիսաժպտուն, երազալից դեմքին» (Թումանյանը ժամանակակիցների հուշերում, Ե., 1969, էջ 22):

Հուշ-դիմանկարները սովորաբար սկսվում են «առաջին անգամ տեսա/ծանոթացա», «առաջին հանդիպում/ծանոթություն», «ճանաչում էի», «հիշում եմ» կառույցներով, որոնք հաստատապես կարելի է համարել հուշագրությանը բնորոշ կաղապարային միավորներ: Ուշագրավ է, որ հուշագիրները քանիցս առիթ են ունեցել շփվելու և հաղորդակցվելու բանաստեղծի հետ, սակայն որոշակի օրինաչափությամբ գրեթե բոլորն իրենց հուշերը շարադրում են՝ մատնանշելով և ընդգծելով առաջին հանդիպումը:

Բնագրի սկզբնամասում հուշագիրները կերպարագծում են Հ. Թումանյանի դիմանկարը՝ արտաքին բարեմասնությունների հաշվառումով՝ երբեմն առանձնացնելով նրա աչքերը, դեմքը, ժպիտը, հայացքը, կազմվածքը, ձայնը, քայլը և այլն. «Առաջին հանդիպումով շատ հաճելի տպավորություն ստացա Թումանյանից…. Նրա դեմքը ողողված էր, կարծես, մի ներքին լույսով: Փարթամ մազերով, աչքերը խոր ու խոհուն: Ժպիտը միշտ ներկա էր դեմքի վրա» (Ա. Իսահակյան, էջ 7):

Գ. Մահարին «Պատանեկություն» վիպակում ներկայացնում է ակնթարթային առաջին տպավորությունը. «Խաչ-փողանից սրընթաց մի կառք անցավ: Ես տեսա մի ժպտուն, ալեզարդ դեմք:

Հովհաննես Թումանյանն է,– ասաց Աղասին:

«Գառնիկ ախպեր»… » (Գ. Մահարի, Երկերի ժողովածու, հ. 5, Ե., 1989, էջ 386):

Հ. Թումանյանի դիմանկարն ամբողջանում է նաև բնավորության գծերի նկարագրումով. «Բնավորությամբ պարզ էր, լավատես ու ժպտուն, ամեն ինչ հեշտացնող, հեշտ ու թեթև տանող, բայց իր վիշտն ու ցավը տանում էր վարագուրած, անտրտունջ» (Ն. Թումանյան, Հուշեր և զրույցներ, Ե., 1969, էջ 45):

Հուշերում Հ. Թումանյանին տեսնում ենք Թիֆլիսում, Էջմիածնում, Դսեղում, Վանում և այլուր: Գործողությունները հաջորդում են միմյանց, որոնց կենտրոնում Թումանյանն է, և որոնք դառնում են բանաստեղծի դիմանկարի ձևավորման մյուս տարրերը: Հետաքրքրական է և նույնիսկ կարևոր, թե հուշագիրը երբ և որտեղ է հանդիպում բնորդին: Այս դեպքում տարածաժամանակային ընդգծումը նորովի է բացահայտում մարդ, բանաստեղծ, ազգային-հասարակական գործիչ Հ. Թումանյանին: Այսպես. բանաստեղծին ներկայացնելով թիֆլիսյան միջավայրում՝ հուշագիրն անդրադառնում է նրան՝ ոչ միայն իբրև հայ գրողների ընկերության նախագահի, այլև ժողովուրդների բարեկամության ջատագովի, ազնիվ մարդու, սիրառատ հոր, նվիրյալ ընկերոջ, սկզբունքային հայի: «Թումանյանը կենտրոնական դեմք էր Թիֆլիսի մտավորական շրջաններում,– գրում է Գ. Լևոնյանը.– նրա մոտ լինում էին զանազան ուղղությունների և քաղաքական համոզմունքների տեր մարդիկ. նա հեղինակություն էր վայելում ոչ միայն հայ, այլև վրաց գրական շրջաններում…» (ԹԺՀ, 445):

Հուշերից տեղեկանում ենք, որ 1908 թ. երգահան Ռոմանոս Մելիքյանը Թիֆլիսում զբաղվում է մանկավարժական գործունեությամբ, հանդիպումներ ունենում հայ մտավորական աշխարհի ներկայացուցիչների հետ, կազմակերպում երաժշտագետների մի խմբակ՝ «Երաժշտական լիգա» անունով: Խմբակի ծնունդը ողջունում է Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանը: Անմոռանալի էին նրանց հանդիպումները՝ ծիծաղաշարժ դրվագներով լի: Թումանյանը նույնիսկ կատակով ցանկություն է հայտնում ընդունվելու երաժշտական այդ խմբակը՝ ստանալով Ռ. Մելիքյանի օրհնությունը: Այցելելով Դսեղ՝ երգահանը Հ. Թումանյանի հետ շրջել է Լոռվա աշխարհում, այնտեղից ոտքով հասել Դիլիջան և ժողովրդական երգեր ժողովել (տես Ռոմանոս Մելիքյանը ժամանակակիցների հուշերում, Ե., 1977):

Թումանյանը շատ էր ծանրաբեռնվում հասարակական գործերով՝ հատկապես Գրողների միության նախագահ ընտրվելուց հետո: Նա պարբերաբար գրական երեկույթներ և աշուղների մրցումներ էր կազմակերպում: «Այնպես պիտի անեմ,– գրում էր Թումանյանը,– որ Թիֆլիսի և ողջ Կովկասի հայությունը ճանաչի ու սիրի մեր գրականությունը…., որ Սայաթ-Նովայի տարեդարձին գրողները ծաղկեփնջերով շքերթ կազմեն դեպի նրա շիրիմը ու վարդերով զարդարեն վարդերի սիրահար մեծ աշուղի գերեզմանը» (ԹԺՀ, 407–408):

Հուշերում բնութագրվում է Մեծ լոռեցու բանավոր խոսքը. Թումանյանը խոսքի մեծ վարպետ էր. «Բանավոր Թումանյանը մի քանի հասակով ավելի բարձր էր, քան գրավոր Թումանյանը: Նրա խոսքի պարզությունը բխում է մտածման պարզությունից» (ԹԺՀ, 138–139):

Հ. Թումանյանը եղել է առակներ, անեկդոտներ պատմելու վարպետ. «Ասում էր, խոսում, կենացներ խմում և ամեն կենացի ու առիթի զանազան դեպքեր, անեկդոտներ պատմում» (ՆԹՀԵՎՋ, 43): Նա Լոռվա գյուղացիների կյանքից շատ սրախոսություններ, կատակներ է հյուսել, նույնիսկ որոշել է դրանք տպագրության հանձնել: Ս. Հովյանը «Մեր Ուհանեզը» հուշագրության մեջ ներկայացնում է լոռեցի և աշտարակցի հնձվորների անեկդոտի՝ Հ. Թումանյանի տարբերակը. «Դսեղ, Օձուն, Մարց, Ագարակ, Բերդ Ամրակից, Գյուլագարակ: Այստեղ Հովհաննեսը ավելացրել է. «Ամանը դատարկ», այսինքն՝ լոռեցին ոչ միայն յոթ գյուղի անուն է տալիս շուտ-շուտ, այլև հենց ասելու ժամանակ էլ մածունն ուտում է» (ԹԺՀ, 260):

Նկարագրություններում բանաստեղծի ուղղակի խոսքերի հիման վրա հուշագիրները տալիս են Թումանյանին բնորոշ սեղմ բնութագրություն, որ հետագայում ձեռք է բերում շրջասական արժեք: Օրինակ՝ «խոսքի և զրույցի կախարդ» (էջ 114), «բերանացի պատմությունների գուսան» (էջ 87), «թամադա ամենայն հայոց» (էջ 452), «գրչի մեծ վարպետ» (էջ 449), «հայոց մեծ վշտի երգիչ» (էջ 129), ««ձեռաց» (էքսպրոմտ) գրող» (էջ 293) և այլն:

Հ. Թումանյանին նվիրված գեղարվեստական վավերագրության խոսքաշարը կառուցված է նաև հեգնանքի դրսևորումներով: Հեգնանքը գրողի հուզական վերաբերմունքի արտահայտություն է. «Երբ դասախոսությունը վերջանում է, Թումանյանն ասում է մի կարճ խոսք խորագույն հեգնական ժպիտով.

— Ես կարծում էի, որ ես Պոլիսը չեմ ճանաչում, բայց բանից դուրս է գալիս, որ Պոլիսն էլ ինձ չի ճանաչում» (ԹԺՀ, 149):

Հուշագրության էջերում Ամենայն հայոց բանաստեղծը հանդես է գալիս նաև որպես ընտանիքի հայր և դաստիարակ: Նա իր զավակներին խորհուրդ էր տալիս, որ յուրաքանչյուրն իր համար հիշատակարան պահի և տպավորությունները կյանքից ու կարդացած գրքերից ամեն օր գրի առնի: 1901 թ. Ուրալվելից նա գրում է. «Սիրելի՛ Մուշեղ, Աշխեն և Նվարդ, ձեր հիշատակարաններն այնքան կարճ են, որ ավելի շուտ մոռացարաններ են, քան թե հիշատակարաններ: Ամենից լավը Նունիկինն էր, որ կորել էր…. Ես երևակայում եմ, թե ինչքան բաներ կային մեջը գրած: Դուք հիշատակարան գրել չգիտեք: Որ գնում եք մի տեղ, նայեցեք, թե ինչն է ամենից ավելի ձեր ուշադրությունը գրավում՝ մարդիկ, բնությունը, բնության ինչ տեսակ լինելը, մարդկանց ինչ տեսակ կյանքը, մի խոսքով, ամեն բան, ինչ որ ձեզ վրա տպավորություն է անում՝ ուրախ թե տխուր, ամեն բան պետք է նշանակեք» (ՆԹՀԵՎՋ, 22):

Անուղղակի ձևով են հյուսված Վախթանգ Անանյանի հուշերը Հ. Թումանյանի մասին: «Ճերմակ դրոշակակիրը» հուշագրության մեջ հեղինակը ներկայացնում է հոր պատմությունները. «Առանձնապես մոտ էինք Դսեղի սարվորներին: Հայրս հաճախ էր խոսում այն բարեկամական կապի մասին, որ շատ հնուց եղել է Թումանյանների և Անանյանների նահապետական ընտանիքների միջև: Նրանք իրենց գյուղում էին ազդեցիկ, նշանավոր օջախ, մերոնք՝ մեր գյուղում: Վարդավառի տոնին կամ մերոնք էին յոթ եղբայրներով, ձիերը հեծած, մեծ թափով ու շուքով հյուր գնացել Դսեղի սարը, կամ Հովհաննես Թումանյանի ավագ եղբայրներն են մերոնց հյուր եկել» (Վախթանգ Անանյան, Հուշագրումներ, Ե., 1984, էջ 309–310):

Հայտնի է, որ Թումանյանը երկու անգամ՝ 1914-ի նոյեմբեր–դեկտեմբերին և 1915-ի հունիսին, եղել է Արևմտյան Հայաստանում, տեսել հայ ազգի ողբերգությունը: Առաջին անգամ հայոց բանաստեղծը՝ իբրև Ազգային բյուրոյի կենտրոնական կոմիտեի անդամ, Շիրվանզադեի, Ներսիսյան դպրոցի տեսուչ Հովսեփ Խուսունցի և հոգևոր այլ այրերի հետ մեկնում է ռազմաճակատ՝ պարզելու ճշմարտությունը ռազմի դաշտ կամավոր մեկնած հայորդիների մասին. պտտվում էին ստահոդ լուրեր, թե ռուսական բանակում կռվող հայ կամավորները զբաղված են կողոպուտով և սպանում են քուրդ և թուրք խաղաղ բնակիչներին (Թումանյանի՝ Արևմտյան Հայաստան կատարած ճանապարհորդության մանրամասները տես Հ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 8, Ե., 1997, նաև՝ Լ. Կարապետյան, «Հովհաննես Թումանյանի հասարակական գործունեությունը», Ե., 1992, էջ 96–174): Ճանապարհորդության մասին կա երկու աղբյուր. մեկը Թումանյանի ծոցատետրերն են, մյուսը՝ Շիրվանզադեի «Պատերազմի վայրերում» ակնարկը: Ն. Թումանյանը նշում է, որ հայրը մտադրություն է ունեցել «այդ օրագրի հիման վրա գրել ու հրատարակել իր ուղեգրությունները» (Ն. Թումանյան, Հուշեր և զրույցներ, Ե., 2009, էջ 121), սակայն չի արել՝ համոզված, որ ճշմարիտ և անկեղծ տպավորությունները չեն տպագրվի, իսկ սուտ ու քողարկված փաստեր ինքը չի կարող ներկայացնել:

Սույն հոդվածի տիրույթից դուրս է Թումանյանի՝ վերը հիշատակված ճանապարհորդության մանրամասներին անդրադառնալը: Սակայն նշենք, որ ավելի ուշ՝ երկրորդ անգամ ռազմաբեմում հայտնված բանաստեղծի համար շատ անհասկանալի հարցեր պարզվում են, երբ դարձյալ Ազգային բյուրոյի հանձնարարությամբ Թումանյանը Վանի ազատագրումից մեկ ամիս անց լինում է այնտեղ:

Վանից վերադառնալուց հետո՝ հուլիսի 23-ին, մամուլի էջերում հայտնվում են լուրեր այն մասին, որ Վանից, Ալաշկերտից և այլ բնակավայրերից դեպի Իգդիր և Էջմիածին են գալիս մեծ թվով գաղթականներ: Հուլիսի 29-ի գիշերը Թումանյանը մեկնում է Էջմիածին: Սարսափելի տեսարան էր ներկայացնում պատմական այս սրբավայրը: Գերմարդկային ջանքեր ու ներքին ուժ, ինքնամոռաց մարդասիրություն էին պահանջվում յուրաքանչյուր մեկից, ով փորձում էր ինչ-որ բանով օգնել թշվառ ու անօգ գաղթականներին: Նրանց մեջ առաջին գծում Թումանյանն էր, որ անձնուրաց անում էր ամեն ինչ՝ փոքրիշատե թեթևացնելու անօթևան ու հայրենազուրկ մարդկանց տառապանքները: Այդ օրերի մասին Անդրանիկը գրում է՝ Թումանյանը «իր տունը, իր ընտանիքի վայելքները թողուցած, եկավ իր երկու չափահաս աղջիկներուն հետ Էջմիածինի, Իգդիրի և Երևանի փողոցներուն և վանքի պատերուն տակ խռնված գաղթականներուն օգնելու….» (ԹԺՀ, 551):

1915 թ. հոկտեմբերի 21-ին «Լուսա» մեկօրյա թերթի առաջին համարում տպագրվում է «Հիշողություններ Էջմիածնի որբանոցից» յուրօրինակ ցուցակը, որտեղ անհուն տառապանքների բովով անցած բանաստեղծը, մեկ-մեկ վերապրելով, հիշում է Էջմիածնի որբանոցում հավաքված մինչև տասը հազար երեխաներին. «Ես էլ նրանցից մեկն եմ, որ էս երեխաների մեջն էի, բայց երբ էսօր նստում եմ ու աշխատում եմ վերհիշել, կարծես թե նրանց՝ երեխաներին չեմ տեսել: Չեմ տեսել, չեմ ճանաչել առանձին-առանձին: Սաստիկ ծանր էր նրանց հետ խոսելն ու խոսեցնելը…. Եթե խոսել ու խոսեցրել եմ, էն էլ շատ քիչ, պատահմունքով…. Սակայն շարունակ աչքիս առաջն է նրանց բազմությունը, նրանց վտիտ, քաղցած ու մերկ բազմությունը….» (Հ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 7, Ե., 1995, էջ 179–180):

Այդ օրերի մասին հիշատակում է նաև Գ. Մահարին. «….Եկավ Հովհաննես Թումանյանը և շրջապատեց իրեն որբերով. ես նրան գիտեի. այդ նա է, որը գրել է «Մի կաթիլ մեղրը», «Շունն ու կատուն»: Նա հագել էր սպիտակ շորեր և դրել էր կեպի: Կեռ քթով, սպիտակ ընչացքով, խաղաղ դեմքով կանգնեց նա, լուռ նայեց բոլորին, հետո նայեց հեռու և հեռացավ» (ԳՄԵԺ, 403): Հուշագրության լեզվատիրույթում թերևս Ամենայն հայոց բանաստեղծ շրջասույթի ձևավորման հիմքերն են նախանշված:

Անշուշտ, չենք կարող շրջանցել այն փաստը, որ գաղթականության հիմնական պատսպարանը եղել է Էջմիածինը, որը դարեր շարունակ բացառիկ դեր է կատարել հայ ժողովրդի համար, ինչը գնահատել են ժամանակի առաջադեմ գործիչներն ու մտավորականները: Բացառություն չէր նաև Թումանյանը: Նա իր ողջ կյանքում մեծապես առնչվել է հոգևորականության հետ:

Տարագիր և հայրենազուրկ հայության հավաքատեղի Էջմիածնում են կայացել հայոց երկու մեծերի՝ Հ. Թումանյանի և Գևորգ Ե կաթողիկոսի հանդիպումն ու հայտնի երկխոսությունը: Այս առումով կարևորվում են ժամանակակիցների հուշագրական պատումները՝ Նվարդ Թումանյան, Աշոտ Պատմագրյան, Վահան Թոթովենց, Ստեփան Զորյան, Վարդգես Ահարոնյան և այլք:

«Ամենայն հայոց բանաստեղծ» պատվանունը այն եզակիներից է, որ ձևավորման օրվանից սկսած մինչ մեր ժամանակները եղել և մնում է ամենասիրելին, և գրեթե չկա որևէ հայ մարդ, որին ծանոթ չլինեն այս շրջասույթն ու այն կրող բանաստեղծը:

Ն. Թումանյանը գրում է. «Սրտաբաց խառնվածք էր հայրիկը և ուզում էր, որ ուրիշներն էլ այդպես լինեին. «Աշխարհքին ու մարդուն նայել բարի սրտով ու պայծառ հայացքով»» (ՆԹՀԵՎՋ, 84):

Աշոտ ԳԱԼՍՏՅԱՆ, բ. գ. դ., պրոֆեսոր

Հաբեթի սերնդաբանությունը

↩ էջ 5

Ծննդոց գրքում Հաբեթին վերագրվում են յոթ որդի՝ Գոմեր, Մագոգ, Մադա, Հավան, Թոբել, Մեսեք և Թիրաս: Հրեա պատմաբան Հովսեփոս Փլավիոսի «Հրեական հնախոսություններ» աշխատության մեջ (I.VI.122) նշվում է. «Նոյի որդի Հաբեթն ուներ յոթ որդիներ. նրանք բնակություն հաստատեցին այնպես, որ սկսած Տավրոս և Ամանոս լեռներից՝ շարունակեցին Ասիայի երկայնքով մինչև Թանայիս (Դոն) գետը և Եվրոպայի երկայնքով՝ մինչև Կադիզ (ներկայումս՝ իսպանական քաղաք): Բնակվելով այն հողերում, որոնց վրա նախկինում ոչ ոք չէր բնակվել, ազգերը կոչեցին իրենց անուններով»:

17-րդ դարում թալմուդյան ռաբբիների կողմից գրված «Սեֆեր Հայաշար»-ում («Հաշերի գիրք») Հաբեթի թոռներին վերագրում են որոշ նոր անուններ, որոնք չկան Հին Կտակարանում, և ներկայացվում է շատ ավելի մանրամասն տոհմաբանություն: Հրեական ավանդապատումներում Աբրահամի կինը՝ Քեթուրան, երբեմն համարվում է Հաբեթի ժառանգ:

Ք. հ. 7-րդ դարում իսպանացի արքեպիսկոպոս և գիտնական, «հին աշխարհի վերջին գիտնական» համարվող Իսիդոր Սևիլացին գրեց իր հայտնի հանրագիտարանային պատմական տրակտատը՝ «Ստուգաբանություն» (Etymologiae) վերնագրով, որտեղ նա եվրոպական ժողովուրդների մեծ մասի ծագումը հետագծում է մինչև Հաբեթ: Գրեթե եվրոպական բոլոր ազգերի գիտնականները մինչև 19-րդ դար շարունակել են կրկնել և զարգացնել Իսիդոր Սևիլացու պնդումը՝ եվրոպացիների՝ Հաբեթից ծագելու մասին:

Անգլիայի ազգային բանաստեղծ, դերասան-դրամատուրգ Վիլյամ Շեքսպիրի «Հենրի IV» պիեսի երկրորդ մասը պարունակում է հեգնական մեկնաբանություն այն մարդկանց մասին, որոնք պնդում են, որ ազգակցական կապ ունեն թագավորական ընտանիքների հետ: Արքայազն Հալը նշում է նման մարդկանց մասին. «....նրանք կամ մեզ ազգակից կլինեն, կամ էլ Հաբեթից առաջացած կլինեն» (II.ii 117–18):

Վրացի պատմաբան և լեզվաբան Իվանե Ջավախիշվիլին (1876–1940 թթ.) Հաբեթի որդիներին կապում է որոշակի հին ցեղերի՝ թուբալների (թաբալներ, հունարեն՝ տիբարենո) և մեշեխների (մեշեխներ/մոսոխներ, հունարեն՝ մոսկո) հետ, որոնք պնդում էին, որ ներկայացնում են ոչ հնդեվրոպական և ոչ սեմական, հնարավոր է՝ «նախաիբերական» ցեղերին, որոնք բնակվել են Անատոլիայում Ք. ա. 3–1-ին հազարամյակներում:

Լեհական սարմատիզմի ավանդազրույցներում սարմատները, որոնք իրանական ժողովուրդ են, համարվում էին Նոյի որդի Հաբեթի սերունդը, ինչը թույլ էր տալիս լեհ ազնվականությանը հավատալ, որ իրենց ծագումը կարող է ուղղակիորեն կապված լինել Նոյի հետ: Շոտլանդացի ժողովրդի՝ Հաբեթից սերված լինելու մասին պատմությունը հրատարակել է Ջորջ Չալմերսը «Կալեդոնիա» աշխատությունում 1807–1824 թվականներին:

Իսլամական ավանդույթում Հաբեթը սովորաբար համարվում է Գոգ և Մագոգ ցեղերի նախնին: Իսլամական ավանդույթը նաև հակված է Հաբեթի սերունդներին նույնականացնել թուրքերի, խազարների, չինացիների, մոնղոլների և սլավոնների հետ: Ըստ Աբուլ-Ղազիի, որը գրել է 17-րդ դարի ազգագրական տրակտատը՝ «Շաջարա-ի Տարակիմա»-ն («Թուրքմենների տոհմաբանությունը»), Քամի սերունդները գնացել են Աֆրիկա, Սեմինը՝ Իրան, իսկ Հաբեթինը՝ Իտիլ (Վոլգա – Եվրոպայի ամենաերկար գետը) և Յաիկ (Ուրալ) գետերի ափերը:

Հաբեթի ավագ որդին *Գոմերն* էր՝ Ասքանասի, Ռիփաթի և Թորգոմայի հայրը: Գոմեր անվանումը Հին Կտակարանում հիշատակվում է նաև Եզեկիելի գրքի 38:6-ում՝ որպես Գոգի՝ Մագոգ երկրի առաջնորդի դաշնակցի:

Հովսեփոսը Գոմերին և «գոմերացիներին» տեղակայել է Անատոլիական Գալաթիայում. «Քանզի Գոմերը հիմնադրել է նրանց, որոնց հույները հիմա անվանում են գալաթացիներ, բայց այն ժամանակ կոչվում էին գոմերացիներ»: Գալաթիան, ըստ էության, իր անունն ստացել է հին գալլերից (կելտերից), որոնք բնակություն են հաստատել այնտեղ: Սակայն ավելի ուշ շրջանի քրիստոնյա գրող Հիպոլիտոս Հռոմեացին մոտ 234 թ. Գոմերին համարել է կապադովկացիների՝ գաղատացիների հարևանների նախնին: Հերոնիմոսը (մոտ 390), Իսիդոր Սևիլացին (մոտ 600) նույնպես հետևել են Հովսեփոսի կողմից Գոմերի՝ գաղատացիների, գալլերի և կելտերի հետ նույնականացմանը:

Ըստ հայերի ծագման վրացական ավանդազրույցի՝ հայերի նախահայր Հայկը, վրացիների նախահայր Քարթլոսը և կովկասյան մի քանի այլ ցեղերի նախահայրերը եղել են եղբայրներ՝ սերելով մի հորից՝ Թորգոմից: Թորգոմը՝ Գոմերի որդին, հայ ազգի հիմնադիր Հայկ նահապետի հայրն էր, հայոց անվանադիր նախնին: Մովսես Խորենացու գրի առած ազգագրանկում Թորգոմը համարվում է Գոմերի թոռը և հայոց անվանադիր նախնի Հայկի հայրը: Եզեկիել մարգարեն հիշատակում է վաճառաշահ «Թոգարմա տունը» (Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ՝ «տուն Թորգոմայ»), որը Տյուրոս քաղաքի վաճառանոցը լցնում է ձիերով ու ջորիներով. «Թորգոմայի տնից քեզ մոտ ձիեր, նժույգներ և ջորիներ էին բերում քո առևտրի ապրանքի դիմաց» (27:14): Աստվածաշնչի հին մեկնիչները «տուն Թորգոմայ» կամ «Թորգոմական աշխարհ» ասելով՝ հասկացել են գլխավորապես Հայաստանը: Բաբելոնի աշտարակաշինությունից և լեզուների բաժանումից հետո Թորգոմը որդիներով և իր ամբողջ ժողովրդով հեռանում է Բաբելոնից և բնակություն հաստատում Մասիս և Արագած լեռների միջև: Սակայն շուտով Թորգոմի ժողովուրդը բազմանում է, և տարածքը, որտեղ բնակվում էին, չի տեղավորում նրանց, ինչի պատճառով էլ նրանք ընդարձակում են իրենց բնակության սահմանները՝ Սև ծովից մինչև Կասպից ծովն ու Կովկասյան լեռները: Թորգոմի որդիները իրենց հոր մահից մի քանի տարի անց ապստամբություն են բարձրացնում բռնակալ Նեբրովթի դեմ և մարտում սպանում նրան: Նեբրովթին հաղթելուց հետո դյուցազն եղբայրներն սկսում են հանգիստ և անկախ կերպով իշխել՝ իրենց երկրներում փոխադարձաբար օգնելով միմյանց:

Հաբեթի երկրորդ որդին *Մագոգն* էր: Եզեկիելի գրքում նշվում է, որ Մագոգի հեթանոս ժողովուրդն ապրում էր «աշխարհի հյուսիսում» և փոխաբերաբար ներկայացնում է չարի ուժերը, ինչն այն կապում է ապոկալիպտիկ ավանդույթների հետ: Մագոգի երկրի մասին Եզեկիելի մարգարեություններում (38–39-րդ գլուխներ) Գոգն ու Մագոգը փոխկապակցված են հիշատակվում: Նոր Կտակարանում այս զույգին հանդիպում ենք Հայտնություն 20:7–8-ում («Երբ հազար տարին լրանա, սատանան իր բանտից պիտի արձակվի և պիտի դուրս գա, որ մոլորեցնի երկրի չորս անկյուններում գտնվող ազգերին, Գոգին ու Մագոգին: Նա նրանց պատերազմի պիտի հավաքի, որոնց թիվը ծովի ավազի չափ է»), և այս դեպքում նրանք կարող են պարզապես լինել Աստծո նախատիպային թշնամիների փոխաբերություններ: Հովսեփոսը Հաբեթի որդի Մագոգին անվանում է սկյութների կամ Սև ծովից հյուսիս գտնվող ժողովուրդների նախահայր: Նրա խոսքով՝ հույները Սկյութիան անվանում էին Մագոգիա: Եզեկիել 38-ում ցեղային անունների թվարկման հերթականության ուսումնասիրությունից բխող այլընտրանքային նույնականացման համաձայն՝ Մագոգը պետք է որ տեղորոշվի Կապադովկիայի և Մարաստանի միջև: Ռաբբի Շլոմո Գանցֆրիդի (19-րդ դար) խոսքերով՝ Մագոգը վերաբերում է մոնղոլներին: Նա մեջբերում է արաբ գրողի, որը Չինական Մեծ պարսպին անվանում է «Մագոգ»:

Աստվածաշնչագետները, ընդհանուր առմամբ, Նոյի երրորդ որդի *Մադային* նույնացնում են շատ ավելի ուշ շրջանի գրառումներում հանդիպող իրանցի մարերին: Մարացիները, որոնց Հովսեփոսը և հետագա գրողների մեծ մասը համարում են Մադայի սերունդները, հայտնի էին նաև որպես Մադա, այդ թվում՝ ասորական և եբրայերեն աղբյուրներում: Մադայի հետ կապված է նաև իրանական Համադան քաղաքը: Ենթադրյալ կապ կա նաև հունական Մեդոսի և Մեդեայի հետ: Մեդոսը և նրա մայրը՝ Մեդեան, դասական հունական դիցաբանական պատմության մեջ նույնպես համարվում էին մարերի նախնիներ: Քրիստոնյա գիտնականները առաջարկել են եբրայական Մադայի և հունական Մեդոսի կապը դեռևս Իսիդոր Սևիլացու ժամանակներից (Etym. 9.2.28):

Հաբեթի չորրորդ որդին *Հավանն* էր: Նրա անունը, ընդհանուր առմամբ, կապվում է հին հույների և Հունաստանի հետ (հմմտ. Ծննդ. 10:2, Դան. 8:21, Զաք. 9:13 և այլն), նրա որդիների անունները (ինչպես նշված է Ծննդոց 10-ում) սովորաբար կապվում են Հյուսիսարևելյան Միջերկրական ծովի և Անատոլիայի վայրերի հետ՝ *Եղիսա* (Կիպրոս), *Թարսիս* (Տարսոնը Կիլիկիայում, բայց 1646 թվականից հետո հաճախ նույնացվում է Իսպանիայի Տարտեսոսի հետ), *Կիտիմ* (նաև Կիպրոս) և *Դոդանիմ* (այլ կերպ՝ Ա Մնաց. 1:7-ում՝ «Ռոդանիմ». Հռոդոս կղզին, որը գտնվում է ժամանակակից Թուրքիայից արևմուտք՝ Կիպրոսի և Հունաստանի միջև):

Հաբեթի որդիներից հինգերորդը *Թոբելն* էր, որ ավանդաբար, ըստ առաջնային աղբյուրների, համարվել է կովկասյան իբերացիների (վրացիների նախնիների) հայրը:

Մյուս որդի *Մեսեքի* անունը (եբրայերեն՝ Մեշեք, «թանկարժեք») Աստվածաշնչում հանդիպում է Ծննդոց 10:2-ում և Ա Մնացորդաց 1:5-ում: Եզեկիել 38:2-ում և 39:1-ում Մեսեքը հիշատակվում է Թոբելի հետ միասին՝ որպես Մագոգի իշխան, և համարվում է հաբեթյան ցեղից: Հովսեփոս Փլավիոսի կողմից Մեսեքը նույնացվում է կապադովկյան «մոսոքենիների» (մուշկի, որը նաև կապված է փռյուգիացիների կամ բրիգացիների հետ) և նրանց մայրաքաղաք Մազակայի հետ: Հիպոլիտոս Հռոմեացու տարեգրության մեջ (Ք. հ. 234) «իլիրացիները» նույնացվում են Մեսեքի սերունդներին: Բացի այդ՝ վրացիներն ունեն ավանդապատումներ, որոնց համաձայն՝ նրանք և այլ կովկասցի ժողովուրդներ, ինչպես հայերը, սերում են Մեսեքից (վրացերեն՝ Մեսխեթի), Թոբելից և Թորգոմայից:

Հաբեթի վերջին որդին *Թիրասն* էր: Նրա ցեղի աշխարհագրական տեղանքը երբեմն գիտնականների կողմից կապվում է թերշիների կամ Թիրսայի հետ, որոնք ծովային ժողովուրդների՝ «թիրսեննների» (տիրեննացիներ) խմբերից էին. ռազմածովային միություն, որը Ք. ա. 1200 թ. ահաբեկում էր Եգիպտոսին և միջերկրածովյան այլ երկրների: Այս ծովային ժողովուրդները Ռամզես III-ի արձանագրության մեջ անվանվում են «Տուրշա», իսկ Մերնեպտահի սյան վրա՝ «Ծովի Թերեշ»: Որոշ ուսումնասիրողներ Թիրասը կապում են Թրակիայի կամ էտրուսկների հետ: 1838 թ. գերմանացի աստվածաբան Յոհան Քրիստիան Ֆրիդրիխ Տուխն առաջարկեց Տիրասը նույնացնել էտրուսկների հետ, որոնք, ըստ հունական և հռոմեական աղբյուրների, ինչպիսին է Հերոդոտոսը (I, 94), Լիդիայում ապրել են որպես տիրսենոներ՝ նախքան Ք. ա. 8-րդ դարում Իտալիա գաղթելը: Հովսեփոսը գրում է, որ Թիրասը եղել է «թիրասացիների» (թրակիացիների) նախնին, որը «կրակի մազերով» (կարմիր կամ շիկահեր) ժողովուրդ էր՝ ըստ Քսենոփանեսի («Հրեական հնախոսություններ», I, 6): 5-րդ դարի հայ պատմիչ Մովսես Խորենացին հայ ազգի հիմնադիր Հայկին ներկայացնում է որպես Թիրասի թոռան:

Այսպիսով՝ Նոյի որդի Հաբեթը համարվում է հյուսիսային (Կովկաս, Փոքր Ասիայի հյուսիս, Սև ծովի շրջակայք) և արևմտյան (Եվրոպայի մեծ մասը) ժողովուրդների նախահայրը: Նրա սերունդները տարածվել են աշխարհագրական լայն տարածքներում՝ ձևավորելով բազմաթիվ ազգեր և մշակույթներ: Հաբեթի տոհմը Աստվածաշնչում ներկայացվում է որպես մարդկության բազմազանության և ազգերի ձևավորման կարևոր հիմք: Այս ավանդությունը կարևոր տեղ է զբաղեցնում ժողովուրդների ծագման վերաբերյալ աստվածաշնչյան պատկերացումներում:

Նարեկ սրկ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Օֆելյա ԳԱՍՊԱՐՅԱՆ

Ասված ունի Բ ծրագիր

↩ էջ 3

Այսօր մենք տեսնում ենք քրիստոնեության հսկայական աճ Աֆրիկայում և Ասիայի որոշ հատվածներում: Նրանք, ովքեր երբևէ «ընտրյալ» չեն համարվել, այսօր դառնում են Աստծո նոր՝ Բ ծրագիրը, որը փոխարինում է սառած Ա ծրագրին: Աստվածաշնչում միշտ գործում է «մնացորդի» սկզբունքը: Երբ ամբողջ ազգը շեղվում էր, Աստված պահում էր մի փոքր խումբ, որի միջոցով վերականգնում էր Իր ծրագիրը: Երբ Եղիա մարգարեն կարծում էր, թե ինքը միակն է մնացել, Աստված հայտնեց նրան գաղտնիքը. «Ինձ համար Իսրայելի մեջ յոթ հազար մարդ թողեցի, որոնց ծնկները չծալվեցին Բահաղի առաջ» (Գ Թագ. ԺԹ 18): Հայ ազգի փրկությունը և Բ ծրագրի մեջ մնալու միակ հույսը այն խորհրդանշական «յոթ հազարն» են, որոնք չեն գայթակղվում ժամանակակից կուռքերով: Սա այն մնացորդն է, որը թույլ չի տալիս, որ Աստված վերջնականապես շրջվի ազգից: Մնացորդը պարզապես «փրկվածների խումբ» չէ, այլ այն թթխմորը, որը պետք է հունցի ամբողջ խմորը: Եթե մենք ուզում ենք, որ մեր ազգը մնա Աստծո ծրագրի մեջ, յուրաքանչյուրս պետք է դառնանք այդ մնացորդի մի մասնիկը:

Ազգային պատասխանատվություն

Տաղանդների առակը: Աստվածաշնչյան այս առակն ուղղակիորեն առնչվում է այն հարցին, թե ինչու է Աստված փոխում Իր ընտրյալներին: Ընտրյալ լինելը ոչ թե «պարգև» է հանգստի համար, այլ «ներդրում»՝ աշխատանքի համար: Աստված հայ ազգին տվել է հսկայական «տաղանդներ»՝ հոգևոր ժառանգություն, սուրբ գրեր, աշխարհում առաջինը լինելու պատիվը: Սա մեր Ա ծրագիրն է. «Մեկին տվեց հինգ տաղանդ, մյուսին՝ երկու, մյուսին էլ՝ մեկ՝ յուրաքանչյուրին ըստ իր կարողության» (Մատթ. ԻԵ 15): Եթե մենք՝ որպես ազգ, մեր տաղանդը, որ է քրիստոնեական ինքնությունը, «թաղենք հողի մեջ»՝ վախենալով աշխարհիկ մարտահրավերներից կամ պարզապես ծուլանալով, Տերը կգա և հաշիվ կպահանջի: Բ ծրագիրը գործի է դրվում այնտեղ, որտեղ տաղանդը թաղված է: Տերը վերցնում է տաղանդն անպիտան ծառայից և տալիս նրան, ով աշխատում է: Սա խիստ նախազգուշացնում է. ընտրյալ լինելու փաստը կարող է խլվել և տրվել մեկ ուրիշին, ով պատրաստ է պտուղ տալ: Հայ ազգը պետք է հիշի, որ Աստված մեզ չի ընտրել, որ մենք լինենք «թանգարան», Նա մեզ ընտրել է, որ լինենք «աղ» և «լույս», իսկ եթե աղը համը կորցնի, այն պիտանի է միայն դուրս նետվելու և մարդկանց ոտքի տակ կոխան լինելու (Մատթ. Ե 13):

Շարունակելի

Հովհաննես սրկ. ԷՎԻՆՅԱՆ
Դիանա ՔՈՉԱՐՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Նարինե Հովհաննիսյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝ qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am
web կայք՝
krishayas.wordpress.com
etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստոր. տպագր. 1.04.2026 թ.
Տպաքանակը՝ 1015